



Կոտայքի մարզի, Նաիրի համայնքի Պոռշյան բնակավայրի վարչական տարածքի Գ. Չաուշի խճուղի 5 հասցեում մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման

ՇՄԱԳ հաշվետվություն

2025թ. փետրվար

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ, ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՌՈՇՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ Գ. ՉԱՈՒՇԻ ԽՃՈՒՂԻ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ԼՈԳԻՍՏԻԿ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄԱԳ) ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կատարող՝

«Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն՝



Մ. Թևոսյան

Երևան, 2025թ.



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՇԿ	Շինարարության կապալառու
ԲՀՏ	Բնապահպանության և հանքարդյունաբերության տեսչություն
ՇՄՍԱԳ	Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՍԿՊ	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ԱԱՇՄ	Առողջություն, անվտանգություն, շրջակա միջավայր
ԻԳ	Իրականացնող գործակալություն
կՎ	Կիլովոլտ
կՎտժ	կիլովատտ-ժամ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՄՎտժ	Մեգավատտ-ժամ
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՍԿ	Սպասարկման (շահագործման) կապալառու
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ԾԱԱ	Ծրագրի ազդակիր անձինք
ՖՄՌ	Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ
ԱՊՄ	Անհատական պաշտպանության միջոցներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՄԼԿ	Մաքսային և լոգիստիկ կենտրոն



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	5
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ.....	5
3.	ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ	6
3.1.	ՀՀ ազգային օրենսդրությունը.....	6
3.2.	Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային նապահականական կոնվենցիաներին	13
3.3.	Վարչական (կազմակերպական) շրջանակը	15
4.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	18
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	25
5.1.	Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը.....	25
5.2.	Մեյամիկա և երկրաբանություն	26
5.3.	Հիդրոերկրաբանություն	29
5.4.	Կլիմա և օդային ավազան	29
5.5.	Մթնոլորտային օդ.....	32
5.6.	Աղմուկ և թրթռում	33
5.7.	Ջրային ռեսուրսներ.....	34
5.8.	Հողային ռեսուրսներ	35
5.10.	Բուսական և կենդանական աշխարհ	37
5.10.1	Կենդանական և բուսական աշխարհ	37
5.11.	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	39
5.12.	Պատմամշակութային հուշարձաններ	39
5.13.	Բնության հուշարձաններ	40
5.14.	Սոցիալական և մշակութային ռեսուրսներ.....	41
6.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ.....	47
6.1.	Նախատեսվող գործունեության բնութագիրը	47
6.2.	Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ.....	48
6.3.	Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը	59
7.	ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	59
7.1.	«Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակ.....	59
7.2.	Ծրագրի առավելությունները	59
8.	ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ	60



8.1. Զուր.....	60
8.2. Օգտագործվող նյութեր.....	61
9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	62
9.1. Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները	62
9.1.1. Օդային ավազան.....	62
9.1.2. Ջրային ավազան.....	64
9.1.3. Թափոնների կառավարում	65
9.1.4. Հողային ռեսուրսներ	66
9.1.5. Կենսաբազմազանություն	66
9.1.6. Պատմամշակութային հուշարձաններ	66
9.1.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ	67
9.1.8. Արտակարգ իրավիճակներ.	67
9.1.9. Աղմուկ և թրթռում	67
9.1.10. Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում	68
9.1.11. Աշխատանքի անվտանգություն և առողջություն.....	69
9.1.12. Հակահրդեհային միջոցառումներ.....	70
9.1.13. Բարեկարգում և կանաչապատում	70
9.2. Բնապահպանական ազդեցությունները և դրանք մեղմող միջոցառումները մաքսային և լոգիստիկ կենտրոնի շահագործման փուլում.....	71
9.2.1. Օդային ավազան.	71
9.2.2. Ջրային ռեսուրսներ.....	71
9.2.3.Թափոնների կառավարում	71
9.2.4. Հողային ռեսուրսներ	71
9.2.5. Կենսաբազմազանություն.....	71
9.2.6. Աղմուկ.....	71
9.3. Սոցիալական ծրագիր.....	72
10. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	72
11. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՍՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ.....	74
12. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	76
ՀԱՎԵԼՎԱԾ 1` ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՍԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	77
ՀԱՎԵԼՎԱԾ 2` ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ	



ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	92
ՀԱՎԵԼՎԱԾ 3՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 5 ՄԱՅԻՄԻ 2022, 621-Ա «ԳՈՒՅՔԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ և ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 496-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՈՒՄ	95
ՀԱՎԵԼՎԱԾ 4՝ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ	96



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկող	ՀՀ Պետական եկամուտների կոմիտե (ՊԵԿ) Նախագահ՝ Ռուստամ Բադասյան
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	ՀՀ, ք. Երևան 0015, Եզնիկ Կողբացի փողոց 1
Էլեկտրոնային հասցե	secretariat@petekamutner.am info.consecoard.am
Նախատեսվող գործունեության անվանումը	Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պողոտյան բնակավայրի Գ. Չաուշի խճուղի 5 հասցեում մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցում (քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով («Բ» կատեգորիա», Կետ 8, քաղաքաշինության բնագավառ, ենթակետ՝ ա))
Նախատեսվող գործունեության նպատակը	Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցում
Նախատեսվող գործունեության իրականացման վայրը	Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պողոտյան բնակավայրի Գ. Չաուշի խճուղի 5
ՇՄԱԳ հաշվետվության մշակող	«Քոնսեկոարդ» ՍՊԸ
Պետական ռեգիստրի գրանցման համարը	264.110.70732
Գրանցման տարեթիվը	21.02.2012թ.

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Նախատեսվող կենտրոնը կառուցվելու է սեփականության իրավունքով ՀՀ ՊԵԿ-ին պատկանող հողամասում, որը գտնվում է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պողոտյան բնակավայրի Գ. Չաուշի խճուղի 5 հասցեում: Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 19.3619 հա (սեփականության վկայականը ներկայացված է Հավելված 2-ում): Նախատեսվում է, որ Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնը կունենա վարչական շենք՝ սպասարկման սրահով, պահեստային, բեռնաթափման և տեսչական



շենքեր, ավտոմեքենաների համար նախատեսված կայանատեղի և օժանդակ շինություններ: Ներկայացված ծրագրի նախագծող ընկերությունն է՝ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն: Ըստ ՀՀ Կառավարության 5 Մայիսի 2022, 621-Ա «գույքը հետ վերցնելու և ամրացնելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի N 496-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման՝ ներկայացված տարածքը տրամադրվել է ՀՀ ՊԵԿ-ին (որոշումը ներկայացված է Հավելված 3-ում):

Ներկայումս, նշված տարածքում չի իրականացվում որևէ գործունեություն: Սակայն տարածքում առկա են եղել շենք-շինություններ, որոնք նախկինում ապամոնտաժվել են, ինչի հետևանքով տարածքում այժմ առկա են որոշ քանակի ոչ վտանգավոր նյութեր և շինարարական աղբ: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել նյութերի տարանջատում, որից հետո օգագործման պիտանի նյութերը կտրամադրվեն ՀՀ Պետական գույքի կառավարման կոմիտեին, իսկ շինարարական աղբը կտեղափոխվի աղբավայր՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Մանրամասները ներկայացված են սույն հաշվետվության ԲԿՊ-ում:

3. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Սույն գլուխը ներկայացնում է նախատեսվող գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային և միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթերը, ներառյալ բնապահպանական քաղաքականությունը, շրջանակային և ճյուղային օրենսդրական ակտերը՝ հողային հարաբերությունների, առողջության և անվտանգության հարցերով:

3.1. ՀՀ ազգային օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի “Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը”:

Հոդված 33.2-ով սահմանված է որ. “Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը”:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:



Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և պաշտպանության մասին համապատասխան ազգային օրենքը հետևյալն է.

✓ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ Օրենք (հունիսի 21, 2014): Սույն հաշվետվությունը մշակվել է համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (մայիսի 3, 2023) օրենքի դրույթների և պահանջների:

Կարևոր է նաև հաշվի առնել բնապահպանական որոշոր կարգավորող հետևյալ իրավական ակտերը.

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (1991, թարմացված 2006-ին),
- ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգությունն ապահովող օրենք (1992),
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք» (1994 թ.),
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998),
- «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք (1998),
- «Բուսական աշխարհի մասին» (1999) օրենք,
- «Կենդանական աշխարհի մասին» օրենք (2000),
- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001),
- «Հիդրոօթերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը (2001),
- «Բնապահպանական կրթության մասին» ՀՀ օրենք (2001),
- «Ընդերքի մասին օրենսգիրքը» (2002),
- «ՀՀ ջրային օրենսգիրք» (2002),
- «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2002),
- «Թափոնների մասին» օրենք (2004),
- «Զրօգտագործողների միությունների և ընկերությունների մասին» օրենքը (2002),
- «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենք (2005),
- «Անտառային օրենսգիրքը» (2005),
- «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքը (2006),
- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք (1998),
- «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք (1996),
- «Զրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006),
- «Սևանա լճի մասին ՀՀ օրենքը (2001),
- «Հողօգտագործման հսկողության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2008



թ.),

➤ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի N 1325-N որոշում,

➤ 2014 թվականի սեպտեմբերի 25-ի՝ ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին 1059-Ա որոշում,

➤ «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն որոշում,

➤ «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում,

➤ «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781 որոշում,

➤ ՀՀ Առողջապահության նախարարի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու մասին հրաման,

➤ «Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման եվ օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշում:

Գնահատման ընթացքում հաշվի են առնվել նաև բնապահպանական այլ օրենքների որոշ դրույթներ: Դրանք առնչվում են օդի պահպանությանը, մշակութային և պատմության հուշարձաններին, բուսական և կենդանական աշխարհներին, ջրօգտագործմանը, սելյամիկ պաշտպանությանը, թափոններին, հիգիենային և աշխատողների պաշտպանությանը, ինչպիսիք են՝

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են “Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (29.05.2006 թիվ 750-Ն), “Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը



հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277-Ն), “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.11.2017 թիվ 1404-Ն), ինչպես նաև 02.11.2017 N1404-Ն որոշումները:

ՀՀ Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը» ընդունվել է ՀՀ փոխվարչապետի N1352-Ն հրամանով:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմեր”-ով:

Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրքով:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք

Սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:



Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջեւ, կազմված համաձայն ածխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, խմբագրված՝ 03.05.2023թ. (ՀՕ-150-Ն)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության եւ նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ “Ա” և ”Բ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են էլնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից:

Փորձաքննությունն իրանացվում է մեկ փուլով՝ երկու հանրային լսումներով: Առաջին հանրային լսումը կազմակերպվում է ազդակիր համայնքի կողմից: Հանրային լսումից և քննարկումից հետո, քննարկման նյութերը, ՇՄԱԳ հաշվետվությունը և օրենքով պահանջով այլ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են ՀՀ շրջակա մջավայրի նախարարություն:

“Ա” կատեգորիայի համար փորձաքննությունը տևում է 80 աշխատանքային օր, իսկ “Բ” կատեգորիայի համար՝ 40 աշխատանքային օր, որի ընթացքում կազմակերպվում են երկրորդ հանրային քննարկումները: Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

“Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին” ՀՀ օրենք /12.12.1992թ./

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական եւ կազմակերպական հիմքերը, ինչպես նաեւ պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար եւ վտանգավոր գործոնների ազդեցությունը եւ բարենպաստ պայմաններ ապահովում նրա եւ ապագա սերունդների



կենսունակության համար:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք

Օրենքն ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին:

Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը:

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական



ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

ՀՀ բնապահպանության նախարարի 26.11.2006 թ. N 342-Ն հրամանով հաստատել է «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը»:

ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին»

Նշված սանիտարական նորմերով սահմանվել են արտադրական, սպասարկման և այլ տեսակի գործունեության արդյունքում առաջացող աղմուկի ազդեցության մակարդակը և ցուցանիշները:

Առողջապահության նախարարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներ:



Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիրբացիայի) հիզդենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”

Հիզդենիկ նորմերը սահմանում են թրթռման դասակարգումը, նորմավորվող չափորոշիչները, աշխատատեղում թրթռման սահմանային թույլատրելի մակարդակները ու բնակելի և հասարակական շենքերում թրթռման թույլատրելի մակարդակները:

3.2. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային նապահպանական կոնվենցիաներին

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ՝ առաջինը ստորագրելով Ռամսարի կոնվենցիան 1993 թ.-ին՝ խոնավ տարածքների պահպանության մասին: Այս ծրագրի համար առանձնահատուկ կարևորություն ունի այն փաստը, որ ՀՀ-ն փոխարինել է նախկին ԽՍՀՄ սահմանումներով մշակված բույսերի և կենդանիների Կարմիր գրքերը՝ ԲՊՄՄ չափորոշիչներին համապատասխան: Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը հիմնված է ԲՊՄՄ Կարմիր գրքերի վրա: Աղյուսակ 1-ում թվարկվում են համաշխարհային և տարածաշրջանային նշանակության բնապահպանական և մշակութային միջազգային այն կոնվենցիաներն ու համաձայնագրերը, որոնք ստորագրվել և/կամ վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Աղյուսակ 1: Միջազգային բազմակողմանի բնապահպանական համաձայնագրեր, որոնք ստորագրվել և վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

	Կոնվենցիա կամ արձանագրություն, ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1993	1993	Որպես իրավահաջորդ անդամա կցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.	
2	Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992)	1993	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ
3	Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն (Կարթեգենյա,	2004	2000	2004	



	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
	2000)				
4	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992)	1994	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ
5	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)	2005	1997	2002	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ
6	Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (ժնև, 1979)	1997	1979	1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ
7	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանյան համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպու, 1991թ.)	1997	1991	1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ
	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)	2011	2003	2010	
8	ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Յելսինկի, 1992թ.)	1997	1992	1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ
	Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին արձանագրություն (Կիև, 2003)		2003		
9	Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994)	1997	1994	1997	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ
10	Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանման մասին կոնվենցիա (Բազել, 1989)	1999	1989	1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ
11	Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985)	1999	1989	1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ
	Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987)	1999	1987	1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ
12	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին»	2001	1998	2001	



	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
	կոնվենցիա (Օրհուս 1998թ.)				
13	Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին կոնվենցիա (Ռոտտերդամ, 1998)	2003	1998	2003	
14	ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրասահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Չելսինկի, 1992թ.)	1997	1992	1996	
	Ջրի և առողջության մասին արձանագրություն (Լոնդոն, 1999)				Վավերացման գործընթացում է
15	Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001)	2004	2001	2003	
16	Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումն արգելելու մասին կոնվենցիա (Ժնև, 1976)	2002	1976	2001	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2002 թ
17	Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենսիա, 2000)	2004	2000	2004	
18	Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972)	1993	1972	1993	Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.
19	Էներգետիկ կանոնադրության պայմանագիր (Լիսաբոն, 1994 թ.)		1994		
	Էներգախնայողության և հարակից բնապահպանական ասպեկտների վերաբերյալ Էներգիայի կանոնադրության արձանագրություն (Լիսաբոն, 1994)		1994		
20	Բեռնի կոնվենցիա-Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոխորհրդի կոնվենցիա (Բեռն, 1979)	2008	1979	2008	

3.3. Վարչական (կազմակերպական) շրջանակը

Այս բաժնում ներկայացված են նախագծի իրականացման մեջ ներառված հիմնական մասնակիցները և ամփոփվում է դրանց դերը եւ պարտականությունները,



առաջնահերթ, բայց ոչ բացառապես բնապահպանական տեսանկյունից:

Իրականացնող գործակալություն (ԻԳ)

Ներկայացվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում՝ ՀՀ ՊԵԿ-ը, որի գրասենյակի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան 0015, Եզնիկ Կողբացի փողոց 1:

Մասնավորապես ՇՄԱԳ շրջանակներում, ԻԳ-ն պատասխանատու է լինելու ամբողջ նախագծի իրականացման մոնիթորինգի համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

➤ Հետևել, որ բնապահպանական կառավարման պլանի բոլոր պահանջները՝ (ներառյալ բնական միջավայրի պահպանության պլանավորումը և մեղմացնող միջոցառումները), կապված նախագծի իրականացման հետ, պատշաճորեն ներառվեն ծրագրի մրցութային փաստաթղթերի մեջ:

➤ Հետևել, որ բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և/կամ համաձայնությունները, որոնք պահանջվում են համապատասխան կառավարական մարմինների կողմից, կառուցողը ստանա նախքան նախագծի շրջանակներում որևէ շինարարական աշխատանքների մեկնարկը:

➤ Համոզվել, որ կառուցողները (կապալառուներ) լիարժեք կերպով պատկերացնում են իրենց պարտականությունները՝ շրջակա միջավայրի պահպանության խնդիրների մեղմացման հարցում՝ կապված ԲԿՊ իրականացման ընթացքում աշխատակազմի հավաքագրման և վերապատրաստման հետ:

➤ Կառուցողի կողմից ԲԿՊ իրականացման մոնիթորինգ, համաձայն մոնիթորինգի պլանի:

Շինարարական Կապալառու (ՇԿ)

Մաքսային և լոգիստիկ կենտրոնը կառուցելու է շինարարական կապալառու ընկերությունը:

Կառուցողը պատասխանատու է բնապահպանական կառավարման համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- համապատասխան օրենքների, կանոնակարգերի եւ ստանդարտների պահանջների ապահովում
- անհրաժեշտ թույլտվությունների եւ / կամ համաձայնությունների ձեռք բերում
- իրականացնել մեղմացնող միջոցառումներ՝ շինարարական փուլի ազդեցությունները նվազեցնելու համար
- ապահովել բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի միջոցառումների իրականացումը
- հետևել, որ պահպանվեն առողջության և անվտանգության պահանջները:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն



ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմանում իրականացնում է շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

ՇՄՆ իրականացնում է գործառույթներ մի քանի առանձնացված ստորաբաժանումների միջոցով.

✓ Նախատեսվող գործունեության բնապահպանական փորձաքննության ընթացակարգը իրականացվում է “Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն” ՊՈԱԿ կողմից:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը, էներգետիկայի եւ բնական պաշարների կառավարման բնագավառում:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով.

- Օգտակար հանածոների պաշարների գործակալություն,
- Ընդերքի տրամադրման գործակալություն,
- Էներգետիկայի պետական տեսչություն,
- Ընդերքի պետական տեսչություն,
- Ջրային տնտեսության պետական կոմիտե:

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ստեղծվել է համաձայն «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության հիման վրա: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, ինչպես նաև կիրառում է պատասխանատվության միջոցներ շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և



ընդերքօգտագործման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

Առողջապահության նախարարություն

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում է իրականացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Նախարարության կազմում գործում են.

Աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանումները.

- Բժշկական օգնության քաղաքականության վարչություն,
- Մոր և մանկան առողջության պահպանման վարչություն,
- Դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչություն,
- Հանրային առողջության բաժին,
- և այլն:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մաքսային և լոգիստիկ կենտրոնը նախատեսվում է կառուցել ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Գ. Չաուշի խճուղի 5 հասցեում: Ըստ սեփականության վկայականի տարածքը զբաղեցնում է 19,3619 հա մակերես: Այն գտնվում է Երևանի կենտրոնից մոտ 11 կմ հյուսիս-արևմուտք, Մ-1 մայրուղու հարևանությամբ:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման:

Հողատարածքի մակերեսը և կադաստրային ծածկագիրը ներկայացված են ստորև.

Աղյուսակ 2: Տեղամասի տվյալները

N	Բնակավայր	Կադաստրային ծածկագիր	Մակերես (հա)
1	Պոռոշյան	07-053-0156-0013	19,3619

Նախատեսվում է, որ Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնը կունենա վարչական շենք՝ սպասարկման սրահով, պահեստային, բեռնաթափման և տեսչական



շենքեր, ավտոմեքենաների համար նախատեսված կայանատեղի և օժանդակ շինություններ: Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է ոմտ 1200 մետր:

Տարածքը տեղակայված է Պոռոշյան բնակավայրի հարավային մասում՝ Մ1 մայրուղու հարևանությամբ: Դեպի ներկայացված տարածք մուտքը կլինի Ս1 մայրուղուց: Մոտակա բնակավայրերն են Քասախը և Երևանը: Հեռավորությունը Քասախ բնակավայրից մոտ 2500 մ է, իսկ Երևանի կենտրոնից՝ մոտ 11 կմ: Քանի որ տարածքը գտնվում է Պոռոշյան բնակավայրի բնակելի թաղամասի մոտ, կան բազմաթիվ բնակելի շենքեր (տներ, խանութներ և այլն): Ամենամոտ բնակելի շինությունը գտնվում է ներկայացված տարածքին շատ մոտ, որի հարևանությամբ սակայն չեն նախատեսվում մեծածավալ շինարարական աշխատանքներ: Այդ հատվածում հիմնականում իրագործվելու են բարեկարգման և փոքրածավալ շինարարական աշխատանքներ:

Մաքսային և լոգիստիկ կենտրոնների նպատակային նշանակությունը ներառում է հետևյալը.

- **Մաքսային պրոցեսների օպտիմալացում:** Մաքսային կենտրոնները ապահովում են ապրանքների մաքսային ստուգումների արագ և արդյունավետ իրականացում, ինչը նպաստում է ապրանքների արագ բաշխմանը:
- **Տրանսպորտային համակարգի օպտիմալացում:** Լոգիստիկ կենտրոնները հնարավորություն են տալիս օգտագործել տարբեր տրանսպորտային միջոցներ՝ ավտոմեքենաներ, գնացքներ, նավեր և ավիացիա, ապահովելով ապրանքների արագ և անվտանգ տեղափոխում:
- **Պահեստավորում և բաշխում:** Մաքսային և լոգիստիկ կենտրոնները ապահովում են ապրանքների պահեստավորումը և բաշխումը՝ ապահովելով անվտանգ և արդյունավետ պայմաններ:
- **Ծախսերի նվազեցում:** Օպտիմալացնելով բեռնափոխադրումների և մաքսային գործընթացները, կենտրոնները նպաստում են բիզնեսների ծախսերի նվազեցմանը և շահույթի ավելացմանը:
- **Աշխատանքի անվտանգություն:** Կենտրոնները ապահովում են աշխատանքի անվտանգությունը և հարմարավետությունը՝ ստեղծելով անվտանգ միջավայր աշխատողների համար:

Մառնարանային մասնաշենքերի տեխնիկական նկարագիր.

Ջերմամեկուսացում

Պատի նյութերը պետք է ունենան բարձր ջերմամեկուսացման հատկություններ՝



ջերմության փոխանցումը նվազագույնի հասցնելու համար:

Սառնարանային մասնաշենքերը կարող են օգտագործել պոլիստիրոլ, պոլիուրեթան կամ այլ ջերմամեկուսիչ նյութեր:

Ջերմաստիճանի կառավարում

Սառնարանային համակարգեր, որոնք ապահովում են ներսում կայուն ցածր ջերմաստիճան:

Ավտոմատացված ջերմաստիճանի կառավարման համակարգեր, որոնք թույլ են տալիս պահպանել ճիշտ ջերմաստիճանը:

Օդի շրջանառություն

Արդյունավետ օդափոխության և օդի շրջանառության համակարգեր, որոնք ապահովում են համաչափ ջերմաստիճան ամբողջ պահեստում:

Սառեցնող նյութեր

Օգտագործվող սառեցնող նյութերը պետք է լինեն էկոլոգիապես անվտանգ և արդյունավետ:

Պահեստավորման համակարգեր

Հարմար պահեստավորման դարակներ և տարաներ, որոնք թույլ են տալիս հեշտությամբ տեղադրել և վերցնել ապրանքները:

Սառնարանային մասնաշենքերի օգտագործման նպատակային նշանակությունը.

Սննդամթերքի պահպանում

Սառնարանային մասնաշենքերը օգտագործվում են սննդամթերքի, օրինակ՝ մսի, ձկան, մրգերի և բանջարեղենի թարմ պահպանման համար: Դրանք ապահովում են սննդամթերքի երկարաժամկետ պահպանում և որակի պահպանություն:

Դեղորայքի պահպանում

Բժշկական նյութերը և դեղորայքը, որոնք պահանջում են ցածր ջերմաստիճանային պայմաններ, պահվում են սառնարանային մասնաշենքերում՝ ապահովելով դրանց արդյունավետությունը:

Արդյունաբերական օգտագործում



Սառնարանային մասնաշենքերը օգտագործվում են քիմիական նյութերի, պլաստիկների և այլ արդյունաբերական արտադրանքների պահպանման համար:

Ներքին բաշխում

Սառնարանային մասնաշենքերը թույլ են տալիս արդյունավետորեն բաշխել ապրանքները մինչև վերջնական սպառողներին, ապահովելով դրանց անվտանգության և որակի պահպանությունը:

Ներկայացված բնակելի շինության կոորդինատներն են՝

Հյուսիսային լայնություն՝ 40°14'45.52", Արևելյան լայնություն՝ 44°25'31.50":

Տարածքին մոտ կան նաև այլ բնակելի շենք-շինություններ, որոնց վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառելու նպատակով մշակվել են համապատասխան միջոցառումներ, որոնք ներկայացված են սույն հաշվետվության ԲԿՊ-ում:

Տարածքում և դրա հարևանությամբ չկան ջրային աղբյուրներ (գետեր, լճեր), ինչպես նաև պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններ: Տարածքը նախկինում օգտագործվել է ՀՀ ՊՆ (Պաշտպանության նախարարություն) կողմից, ուստի մեծապես ենթարկված է մարդածին ազդեցության:

Հեռավորությունը Պռոշյան բնակավայրի կենտրոնից կազմում է մոտ 550մ, Մ1 մայրուղուց՝ մոտ 5-10մ, ամենամոտ բնակելի շենք-շինություններից՝ մոտ 5-10մ, հյուրանոցից (դեպի հյուսիս-արևելք)՝ մոտ 45մ, գազի լցակայանից՝ մոտ 40մ, մեքենաների տեխ. սպասարկման կետից (դեպի հարավ-արևելք)՝ մոտ 155մ:

Տարածքի իրադրային սխեման, գլխավոր հատակագիծը և կադաստրային քարտեզը ներկայացված են ստորև.




Պատկեր 1: Նախատեսվող գործունեության տարածքի իրադրության սխեման








Պատկեր 2: Գլխավոր հատակագիծ





Կոտայքի մարզ
Նաիրի համայնք գյուղ Պոռոշյան
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 07-053-0156-0013
Մասշտաբ 1: 5000

Կոորդինատներ					
	X	Y	X	Y	
1	8450720.6730	4456932.9517	81	8451120.9163	4456720.1577
2	8450734.3419	4456933.3222	82	8451125.1141	4456740.0227
3	8450777.3023	4456942.2454	83	8451129.9863	4456773.7845
4	8450782.6041	4456944.1850	84	8451168.3430	4456759.3061
5	8450782.4678	4456943.1399	85	8451167.2044	4456748.9794
6	8450802.0977	4456934.0033	86	8451215.9909	4456748.9784
7	8450810.6943	4456937.7028	87	8451237.6256	4456756.1017
8	8450820.0489	4456938.3210	88	8451299.5292	4456762.9807
9	8450820.1419	4456938.3145	89	8451224.7852	4456771.0802
10	8450836.2009	4456930.0940	90	8451286.8960	4456767.4724
11	8450845.4051	4456926.6256	91	8451287.2559	4456794.6114
12	8450886.4857	4456926.8653	92	8451286.8658	4456790.2518
13	8450889.5133	4456923.9693	93	8451283.5633	4456804.8441
14	8450889.3383	4456920.5820	94	8451289.0460	4456809.3237
15	8450879.8699	4456925.0225	95	8451289.6712	4456876.9100
16	8450884.5145	4456923.2442	96	8451162.6415	4456865.3235
17	8450881.4503	4456921.2380	97	8451159.2153	4456762.4678
18	8450901.0782	4456929.8878	98	8451123.6160	4456777.2520
19	8450907.1473	4456929.4142	99	8451118.4931	4456772.7730
20	8450910.6467	4456929.0039	80	8451111.7454	4457069.8086
21	8450916.4873	4456929.9614	81	8451110.5692	4457069.0702
22	8450923.9707	4456921.8309	82	8451107.0768	4457069.8641
23	8450940.3790	4456922.4335	83	8451108.8504	4457067.3008
24	8450947.1959	4456921.0428	84	8451099.5462	4457061.8283
25	8450947.7003	4456920.1898	85	8451094.2722	4457067.7893
26	8450949.8783	4456920.0918	86	8451093.6163	4457064.8624
27	8450949.7369	4456926.7323	87	8451098.2651	4457053.1107
28	8450968.2811	4456929.1793	88	8451095.1923	4457050.9004
29	8450975.6521	4456929.2753	89	8451092.8039	4457052.4629
30	8450990.1969	4456929.9061	90	8451078.5948	4457046.0420
31	8451000.6882	4456935.5211	91	8451076.6240	4457043.8670
32	8451003.8072	4456939.9512	92	8451072.2719	4457041.4276
33	8451002.5747	4456939.7194	93	8451069.7471	4457037.4006
34	8451006.1454	4456936.6783	94	8451061.2316	4457033.3781
35	8451009.2542	4456950.2008	95	8451055.8541	4457029.7169
36	8451009.8939	4456951.0119	96	8451049.6922	4457025.5652
37	8451009.6259	4456951.7198	97	8451049.7913	4457024.7232
38	8451011.7069	4456951.7716	98	8451049.6939	4457023.8247
39	8451018.1461	4456951.3035	99	8451049.3823	4457023.4186
40	8451028.8406	4456950.8670	100	8451048.8179	4457022.5469
41	8451108.1613	4456952.7187	101	8451030.4858	4457009.9737
42	8451115.9052	4456952.2054	102	8451031.8673	4457008.3418
43	8451122.8696	4456952.0972	103	8451029.8969	4456991.1212
44	8451132.4703	4456952.2473	104	8450981.7922	4456970.0530
45	8451138.4439	4456956.9342	105	8450970.8829	4456958.3682
46	8451132.0943	4456957.0923	106	8450969.8744	4456957.3856
47	8451116.5022	4456952.2000	107	8450967.1919	4456950.7060
48	8451097.7189	4456952.1302	108	8450965.6413	4456963.5243
49	8451094.7529	4456952.7192	109	8450964.0867	4456964.1441
50	8451094.7525	4456953.1018	110	8450963.6225	4456957.3821
51	8451092.6487	4456961.9242	111	8450969.6867	4456948.0508
52	8451094.8495	4456961.5307	112	8450967.2128	4456942.3672
53	8451098.1800	4456960.0944	113	8450964.1764	4456941.2764
54	8451094.6029	4456968.3267	114	8450973.4862	4456749.4710
55	8451099.3000	4456993.7930	115	8450969.9915	4456968.5909
56	8451093.6235	4456995.1383	116	8450962.3529	4456966.0353
57	8451056.1487	4456988.3774	117	8450879.7411	4456965.8615
58	8451042.6647	4456974.2082	118	8450821.6843	4456970.4889
59	8451083.8019	4456974.7782	119	8450801.6984	4456968.2146
60	8451086.3191	4456974.8793			



Պատկեր 3: Կադաստրային քարտեզ-սխեմա

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ


5.1. Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը

ՀՀ տարածքը զբաղեցնում է Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևելյան հատվածը, որը կազմված է ալպիական լեռների ձևավորման գործընթացների արդյունքում առաջացած երիտասարդ ալիքավոր լեռնաշղթաներից, որը կոչվում է Փոքր Կովկաս, ինչպես նաև հյուսիս-արևելքում տեղակայված հրաբխային կազմավորման զանգվածներից, որոնք կազմում են Հայկական հրաբխային բարձրավանդակի մի մասը (Արագած, Արա, Հատիս և Գեղամա նն):

Ներկայացված տարածքը գտնվում է ծովի մակերևույթից մոտ 1200մ բարձրության վրա (հարակից է Պոռոշյան բնակավայրին): Տարածաշրջանում գերակշռում են ցածրադիր լեռնային հարթությունները՝ մինչև 1500մ:

Ռելիեֆի ձևագրական տիպը թեք է, մասամբ հորիզոնականին մոտ, տեղ-տեղ ձորակներով մասնատված (800-1500մ):


Պատկեր 4: Գործունեության տարածքի ռելիեֆը



5.2. Սեյսմիկա և երկրաբանություն

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է ակտիվ երկրաշարժային գոտում; Հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ զոնաները. Մերձքուռյան, Սոմխեթա-Ղարաբաղի, Մերձսևանյան, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց-Զանգեզուրի, Երևան-Օրդուբադի, Ուրծ-Վայքի: Հիմնականում նշված զոնաների սահմաններով է անցնում երկրկեղևի խորքային բեկվածքները, որոնցից ամենախոշորն են Սևան-Աքերայի, Շիրակ-Զանգեզուրի և Միջին Արաքսյան /Երևանյան/ բեկվածքները: Բեկվածքների այս զոնաները թափանցում են երկրկեղևի 40-50 մետր խորություններ, իսկ երկրկեղևի մակերեսին արտահայտվում են 5-10 կմ լայնություն ունեցող գոտիներով, որոնց բնորոշ է օֆիոլիթային զուգորդության ձևափոխված ապարներ:


Պատկեր 5: Երկրկեղևի հիմնական խորքային բեկվածքները



Պատկեր 6: ՀՀ սեյսմիկ շրջանացման սխեմատիկ քարտեզը /նկարը վերցված է ՀՀ Պետական վիճակագրական վարժության կայքից: $a=0.2g$, մինչև 3 բալ, $a=0.3g$, 3-ից 9 բալ, $a=0.4g$, 9 և ավելի բալ, $a=0.5g$, կործանարար երկրաշարժ/



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՑՄԱԿ ԵՐԶԱՆՑՄԱՆ ՔԱՐՏԵԶ
SEISMIC ZONATION MAP OF THE REPUBLIC OF ARMENIA



Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված՝ ՀՀՇՆ II-20.04.2020թ. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերի սահմանված են չափանիշներ, համաձայն որի, ըստ ուժգնության աճող հաջորդականության առկա են՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներ, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար՝ 300, 400 և 500 սմ/վրկ² է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում: Հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում՝ $a=400$ սմ/վրկ², $A=0.4g$:

Պատկեր 7: Սեյսմիկ գոտիների քարտեզ



Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայանները ունեն դիտարկումների բավականին երկար (30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի (2009թ. ներառյալ) տվյալների հաշվառումով: Տեղումների որոշ հարաչափերի հաշվարկման համար օգտագործվել են նաև կարճ շարք ունեցող օդերևութաբանական դիտակետերի տվյալները: Տարածքի կլիմայի բնորոշման համար հիմք է վերցրվել մոտակայքում գտնվող օդերևութաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները:

Կլիմայական պայմանների մանրամասն ցուցանիշները ներկայացված են ստորև՝ աղյուսակներում: Ընդհանուր առմամբ Ծրագրի համար հայցվող տարածքը գտնվում է ցածրադիր կլիմայական շրջանում, որտեղ. Ամառ՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին 21°C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին) 35% ցածր, փարենպաստ լեռնահովտային քամիներ, քամու միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ: Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0-5°C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին) 60-70%, քամու միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ: Ներկայացված Ծրագրի իրականացման ամենմոտ օդերևութաբանական ցուցանիշները վերլուծելով, կարելի է նշել, որ դիտարկվել է -41.2°C օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճան և -24.5°C բացարձակ նվազագույն ջերմաստիճան, ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը կազմել է 72% և ամենաշոգ ամսվանը՝ 44%, մթնոլորտային միջին տարեկան տեղումները կազմում են 377մմ, իսկ տարվա մեջ միջին ձնածածկ օրերի քանակը՝ 48: Առանց արևի օրերի քանակը կազմում է տարեկան 63օր (2489ժ.):

Կլիմայի և օդային ավազանի մասին տեղեկատվական ցուցանիշները վերցված են Ծրագրի համար հայցվող տարածքին ամենամոտը գտնվող «Աշտարակ» օդերևութաբանական դիտակետից:

Աղյուսակ 3: Օդի միջին ջերմաստիճանը, °C

Բնակավայրի անվանումը	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Աշտարակ	-3,2	-0,1	5,8	11,7	16,5	21,5	25,2	25,2	20,5	13,6	6,2	-0,2	11,9	-24,5	41,2

Աղյուսակ 4: Օդի հարաբերական խոնավությունը (%)

Ըն ակ ամ ակ	Օդի հարաբերական խոնավությունը. %



	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		Ամենա-ցուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Աշտարակ	79	71	64	64	64	57	54	54	57	66	72	80	65	72	44

Աղյուսակ 5: Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը													
	ըստ ամիսների													Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		
Աշտարակ	27	30	36	55	59	33	20	11	13	34	29	30	377	
	24	24	28	39	45	30	45	22	32	43	40	22	45	

Աղյուսակ 6: Ձյան ծածկույթ

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձյան ծածկույթի օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը
1	2	3	4	5
Աշտարակ	55	48	198	70

Աղյուսակ 7: Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ծծումբ, (գ/ժամ)	Ամիսներ	Կրկնակիությունը, % ըստ ուղղությունների Միջին արագությունը, մ/վ								Անհորմոլությունների կրկնակիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (□15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "ո" տարիների ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս- Արև- վեյսան (ՀսԱրլ)	Արև- վեյսան (Արլ)	Հարավ- Արև- վեյսան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ- Արև- մտյան (ՀվԱրմ)	Արև- մտյան (Արմ)	Հյուսիս- Արև- մտյան (ՀսԱրմ)					20	50	100
			4	5	6	7	8	9	10	11					12	13	14
Աշտարակ	891,5	Հունվար	4	21	22	11	16	12	10	4	-	2,0	2,1	33	29	31	34
			1,6	2,0	2,2	2,3	2,0	1,8	2,0	2,1							
		Ապրիլ	4	18	23	12	15	13	11	4	-	2,7					
			3,7	2,8	2,6	2,8	2,8	2,7	2,9	2,8							
		Հուլիս	4	26	23	11	12	11	9	4	-	3,2					
			4,4	3,5	3,3	3,2	3,2	2,6	2,7	3,2							
		հոկտեմբեր	4	24	26	12	13	10	9	2	-	2,2					
			1,7	2,1	2,3	2,4	2,3	2,1	2,1	2,2							

Աղյուսակ 8: Ձնոտան սկիզբը, վերջը և տևողությունը



Բնակավայրի անվանումը	Սկիզբ	Վերջ	Տևողություն, օր
1	2	3	4
Աշտարակ	16 դեկտեմբեր	15 փետրվար	62

Աղյուսակ 9: Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Արևափայլի տրոհությունը և առանց արևի օրերի քանակը													Տարեկան
	Տևողությունը	ըստ ամիսների												
		I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	X I	XII	
Աշտարակ	ժ	90	118	152	181	242	311	342	326	278	211	154	84	2489
	օր	14	9	7	5	2	0.4	1	0.2	1	3	6	15	63

5.5. Մթնոլորտային օդ

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ:

Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման: Մթնոլորտային օդի որակի ուսումնասիրությունները կատարվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դիտակետերի միջոցով: Աղբերքի և մոտակա բնակավայրերի տարածքում չկան էկոմոնիթորինգի դիտակետեր և բնակավայրի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները որոշվում են հաշվարկային եղանակով՝ ըստ բնակչության թվաքանակի:

Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքէջի՝ մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները ներկայացվում են ստորև, որոնց թվին է պատկանում նաև Պռոշյան բնակավայրը:

- Փոշի՝ 0.071 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³:

Պատկեր 8: ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



5.6. Աղմուկ և թրթռում

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդ բերված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10: ՀՀ սահմանված աղմուկի նորմերը

Ընկալիչ	Ժամերը	Աղմուկի առավելագույն թույլատրելի մակարդակը	
		dBL _{AEQ}	dBL _{AMAX}
Բնակելի և հասարակական շենքերի մոտ	06:00-22:00	55	70
	22:00-06:00	45	60

Աղյուսակ 11: Լարվածության եվ ծանրության տարբեր կատեգորիաների աշխատանքային գործունեության աշխատատեղերում ձայնի սահմանային թույլատրելի մակարդակները եվ ձայնի սահմանային մակարդակները դԲա-ով

Աշխատանքային	Աշխատանքային գործընթացի ծանրության կարգ
--------------	---



գործընթացի լարվածության կարգ	թեթև ֆիզիկական ծանրաբեռնվածություն	միջին ֆիզիկական ծանրաբեռնվածություն	1 աստիճանի ծանր աշխատանքի	2 աստիճանի ծանր աշխատանքի	3 աստիճանի ծանր աշխատանքի
Թեթև աստիճանի լարվածություն	80	80	75	75	75
Միջին աստիճանի լարվածություն	70	70	65	65	65
Աշխատանքի 1 աստիճանի լարվածություն	60	60			
Աշխատանքի 2 աստիճանի լարվածություն	50	50			

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները (հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տարածքը գտնվում է Մ1 մայրուղու հարևանությամբ): Ելակետային իրավիճակում մաքսային և լոգիստիկ կենտրոնի համար հայցվող տարածքում աղմուկի մակարդակը ցածր է, բայց մայրուղու հարևանությամբ գտնվող հատվածում՝ միջին: Գործնականում աղմուկի աղբյուրները մարդածին են /ավտոտրանսպորտային միջոցներ/:

5.7. Ջրային ռեսուրսներ

ՀՀ կառավարության կողմից “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին” որոշման (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում) սահմանված է ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար: Տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ գերազանց (1-ին դաս), լավ (2-րդ դաս), միջակ (3-րդ դաս), անբավարար (4-րդ դաս) և վատ (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոգերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է գետերի, ջրամբարների, Որոտան-Արփա, Արփա-Սևան ջրատարների և Սևանա լճի 151 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական 40-65 ցուցանիշով



(հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Նախատեսվող գործունեության տարածքում և դրա հարևանությամբ առկա չեն ջրային ռեսուրսներ (ըստ հասանելի աղբյուրների տվյալների), որոնք կարող են ենթարկվել որևէ ազդեցության Ծրագրի իրականացման շրջանակներում: Տարածքին ամենամոտ ջրային ռեսուրսը Քասախ գետն է, որը գտնվում է ներկայացված տարածքից ավելի քան 7կմ (դեպի հյուսիս-արևուտք) հեռավորության վրա:

5.8. Հողային ռեսուրսներ


Նախատեսվող գործունեության տարածաշրջանում ռելիեֆը թեք է, մասամբ հորիզոնականին մոտ, տեղ-տեղ ձորակներով մասնատված (800-1500մ):

Գեոմորֆոլոգիական տեսակետից ռելիեֆին բնորոշ են լավաներով ծածկված եզրային սարավանդները, փոքրաթեք ծալքավոր կառույցների վրա:

Տարածաշրջանում գերակշռում են կիսանապատային գորշ խճաքարային տիպիկ տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած հողային տիպերը:

Հողերի էրոզվածության աստիճանը V-րդ կարգի է՝ 45-70%:

Պատկեր 8. Հողերի էրոզվածությունը



Օգտահանված բերրի հողի պահպանման պահանջները հետևյալն են.

ա/ Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես պետք է դարսվի լայնակույտերով:

բ/ Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:

դ/Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները պետք է ամրացվեն խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:

ե/ Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի:

զ/ Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում և պետք է բացառվի լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճուղի, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

է/ Հողի բերրի շերտը մինչ օգտահանումը չպետք է աղտոտված և աղբոտված լինի արդյունաբերական և կենցաղային թափոններով, կոշտ առարկաներով, քարերով, խճուղի ու շինարարական աղբով, ինչպես նաև պետք է համապատասխանի



սանիտարահիգիենիկ պահանջներին:

Գործունեության տարածքի որոշ հատվածներում հանդիպում են բաց տարածքներ, որտեղ առկա է բուսահող: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ բերրի հողաշերտի հզորությունը չի գերազանցում 10սմ-ն, առաջնորդվելով ՀՀ Կառավարության 2 նոյեմբերի 2017թ.-ի «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու» մասին N 1404-Ն որոշումով, ներկայացված գործունեության շրջանակներում հնարավոր չէ իրականացնել բերրի հողի հանում և պահեստավորում:

5.10. Բուսական և կենդանական աշխարհ

5.10.1 Կենդանական և բուսական աշխարհ

Կենսաբազմազանության ուսումնասիրությունները իրականացվել են երկու փուլով.

Գրասենյակային աշխատանքների փուլ

Գրասենյակային փուլում ուսումնասիրվում է տարածաշրջանի կենսաբազմազանության վերաբերյալ առկա հրատարակված նյութերը, օրենսդրական դաշտը, կազմվում են բնորոշ բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների ցուցակները, ճշտվում է նրանց կենսամիջավայրի, կենսակերպի առանձնահատկությունները, ճշտվում է բուսատեսակների և կենդանատեսակների արտաքին նկարագրությունը: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչներին, բնաշխարհիկ (էնդեմիկ): Ուսումնասիրության համար հարուստ նյութ կարող են տալ քարտեզագրական նյութերը և տիեզերական լուսանկարները:

Դաշտային հետազոտության փուլ

Դաշտային հետազոտությունը կատարվում են երկրահետազոտության դասական եղանակով: Հետազոտվող տարածաշրջանը մասնատվում է ըստ հիմնական բիոտոպերի՝ հաշվի առնելով տեղանքի ռելիեֆը և լանդշաֆտը՝ ներառելով միկրոռելիեֆի ողջ բազմազանությունը: Հետազոտության ընթացքում գրանցվում և լուսանկարվում են հանդիպող բուսատեսակները և կենդանատեսակները: Եթե դաշտային պայմաններում հնարավոր չէ որոշել բուսատեսակը, ապա վերցվում է բուսատեսակի ամբողջական կամ բույսից առանձին նմուշներ՝ լաբորատոր պայմաններում այն ուսումնասիրելու նպատակով: Աշխատանոցային պայմաններում բույսերի տեսակները որոշվում են “Հայաստանի ֆլորայի” 11 հատորյակի միջոցով (1954-2010 թթ.), օգտագործում է մասնագիտականալ գրականություն:



Կենդանական աշխարհի ուսումնասիրությունը կատարվում է բուսական աշխարհին զուգահեռ՝ ըստ բիոտոպերի: Թռչունները սովորաբար դիտարկվում են հեռադիտակով և տեղում համեմատվում թռչունների դաշտային ուղեցույցի տվյալների հետ (Մարտին Ս: Ադամյան, Դանիել Քլեմ Կրտսեր „Հայաստանի թռչունները,, դաշտային ուղեցույց, ISBN: 0-9657429-5-4): Բացառիկ դեպքերում տեղադրվում են թակարդներ, կազմակերպվում են դարաններ կամ գիշերային դիտարկում: Դաշտային աշխատանքների ժամանակ հավաքվում են նաև տեղեկություններ տարածաշրջանի բնակչությունից:

Հազվագյուտ և անհետացող տեսակների կարգավիճակը ճշտվում է ըստ Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքերի և Բնության և նրա ռեսուրսների պահպանության Միջազգային միության հանձնաժողովի կողմից մշակված չափանիշների:

Նախատեսվող գործունեության տարածքում շինարարական աշխատանքների ընթացքում գրեթե ազդեցության չի ենթարկվի տեղամասի բուսական ծածկույթը և կենդանական աշխարհը, որովհետև դրանք գործնականում բացակայում են:

Ազդեցությունը կանխատեսվում է որպես ոչ էական, քանի որ տարածքը փոքր է որպեսզի զգալի ազդեցություն լինի տարածաշրջանի կենդանական աշխարհի վրա: Բուսական աշխարհին հասցվող հավանական վնասը ևս չնչին է լինելու քանզի տարածքը աղքատ է բուսական աշխարհով: Կարևոր է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ տարածքը երկար տարիների ընթացքում ենթարկվել է մարդածին ազդեցության:

Ըստ հետազոտությունների, մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման համար նախատեսված տարածքներում չեն հայտնաբերվել ՀՀ Կարմիր Գրքում գրացնված բուսատեսակներ և կենդանատեսակներ:

Կենսաբազմազանության ուսումնասիրությունները իրականացվել են «Կոնսեկոարդ» ՍՊԸ կազմակերպության կողմից (մասնավորապես բուսաբան՝ Մերինե Սարգսյան և կենդանաբան՝ Մամիկոն Ղասաբյան):

Պռոշյան բնակավայրը պատկանում է Երևանի ֆլորիստիկական շրջանին: Երևանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում՝ կիսաանապատային տարրերով չոր տափաստանային լանդշաֆտում:

Երևանի ավազանը գտնվում է ծովի մակարդակից 860-1390 մ բարձրության վրա: Երևանի ավազանում կան հարթավայրային լանդշաֆտներ և լավային սարահարթեր՝ կազմված կիսաանապատային և նախալեռնային գոտիներից: Դիտարկվող տարածքում, որտեղ իրականացվելու է նախատեսվող գործունեությունը, գերակշռում



են լավային դաշտերը, իսկ հարավային լանդշաֆտները Հրազդան և Գետառ գետերի սելավատարներն են: Գտնվելով անջուր կիսաանապատային գոտում՝ Երևան քաղաքն ունի հարուստ ստորգետնյա ջրատար հորեր՝ խորը ջրային ավազաններ: Երևան քաղաքի տարածքը Անդրկովկասի ամենաչոր շրջաններից է, կլիման այստեղ շատ չոր է, կիսաանապատային: Օդի հարաբերական խոնավությունը ցածր է նաև Երևանում, որն ամռան ամիսներին իջնում է մինչև 40 տոկոս: Երևանում հաճախ է նկատվում կարճ գարուն, որը բացասաբար է անդրադառնում և՛ բուսական, և՛ կենդանական աշխարհի վրա:

Երևանի հողերը տիպիկ գորշ կիսաանապատային են, օգտակար հանածոներով հարուստ, կարբոնատներով հարուստ, կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ, թեփուկավոր կամ փոշոտ կառուցվածքով և քարքարոտ, ինչի հետևանքով բույսերի աճն ու զարգացումն ընթանում է զգալի դժվարություններով:

Երևանի ֆլորիստիկական շրջանի բուսականությունը կիսաանապատային է՝ անցողիկ բուսատեսակների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնական ճանապարհով ծառեր չեն աճում, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Ուստի Երևանում ծառեր ու թփեր կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայության դեպքում:

Երևանի լանդշաֆտում հանդիպում են բույսերի համակեցության հետևյալ 2 ենթատեսակները՝ 1. Phrygana (ժայռային բուսականություն), 2. Tomilyar (անապատային): Տարածքները բնութագրվում են հիմնականում կիսաանապատային բուսածածկույթի քարաֆիլ տարբերակներով՝ վաղանցիկ և հալոֆիլ, անապատային բուսատեսակներով:

5.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեության տարածքը չի ընկնում որևէ բնության հատուկ պահպանվող տարածքում, ինչպես նաև տարածքի հարևանությամբ չկան ԲՀՊՏ-ներ: Ամենամոտ ԲՀՊՏ-ն «Խոսրովի անտառ» պետական արգելոցն է, որը տեղակայված է Արարատի և Կոտայքի մարզերում:

Ներկայացված Ծրագրի իրականացման շրջանակներում որևէ ազդեցություն արգելոցի վրա չի նախատեսվում, քանի որ գործունեության համար ընտրված տարածքը գտնվում է արգելոցից ավելի քան 24կմ հեռավորության վրա:

5.12. Պատմամշակութային հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 24 դեկտեմբերի 2003 թվականի N 1793-Ն որոշման՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ»-ի, ներկայացված տարածքին



ամենամոտ Պոռշյան և Քասախ բնակավայրերում չկան պատմական, մշակութային հուշարձաններ, ինչը վկայում է այն մասին, որ ներկայացված Ծրագրի իրականացումը չի կարող ունենալ որևէ բացասական ազդեցություն պատմամշակութային հուշարձանների վրա:

5.13. Բնության հուշարձաններ

Համաձայն կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման՝ Կոտայքի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

Աղյուսակ 12: ՀՀ Կոտայքի մարզի բնության հուշարձանների ցանկը

Երկրաբանական

«Անանուն» խզվածքներ	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ
«Թագավորանիստ» խարամային կոն	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
«Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
«Ծակ քար» բնական թունել	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
«Անանուն» լանջային էրոզիա	Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին
«Անանուն» լավային ծալքեր	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
«Անանուն» խորշեր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
«Հատիս» հրաբուխ	Կոտայքի մարզ, Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ
«Ավազան» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ
«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ
«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև
«Անանուն» օբսիդիանի ելքեր	Կոտայքի մարզ, Զրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
«Անանուն» քարե	Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի



կուտակումներ	կիրճում
«Գութանասար» հրաբուխ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ
«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեգխարաբ» գյուղատեղիի մոտ
Ձորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	Կոտայքի մարզ, գյուղ Ձորաղբյուր

Ջրակրարանական

«Հաղպրտանք» աղբյուր	Կոտայքի մարզ, Հրագոյան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
«Համով» աղբյուր	Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
«Քաղցր» աղբյուր	Կոտայքի մարզ, Արգնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրագոյան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
«Ձորի» աղբյուր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
«Ավագան» աղբյուր	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա

Ջրագրական

«Սագերի» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
«Վիշապա» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
«Բազմալիճք» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս
«Լուսնալիճ» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ

Բնապատմական

«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում
--------------------------------	---

Կենսաբանական

«Ռեիկտային կրկես Քյորոլլի լեռան մոտ»	Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ
«Ալպյան գորգ»	Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանա-պարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպա-սարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա)
«Թանթրվենի, Տիգրանի»	Կոտայքի մարզ, Արգնի առողջարանի մոտ, Հրագոյան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

Նշված պատմամշակութային և բնության հուշարձաններից ոչ մեկը չի գտնվում նախատեսվող գործունեության տարածքում և չի կարող ենթարկվել որևէ բացասական ազդեցության ներկայացված Ծրագրի իրականացման շրջանակներում:

5.14. Սոցիալական և մշակութային ռեսուրսներ



Ծրագրի առաջարկվող տարածքը գտնվում է Կոտայքի մարզում:

Կոտայքի մարզ

Տարածքը՝ 2076 կմ²;

Համայնքներ, 2023թ. տարեսկզբի դրությամբ՝ 11

(https://www.armstat.am/file/Map/MARZ_05.pdf):

Քաղաքները՝ 7:

Գյուղեր՝ 61;

Բնակչության թվաքանակը 2023թ. տարեսկզբի դրությամբ՝ 253,8 հազ. մարդ:

Այդ թվում՝ քաղաքային – 137,4 հազ. մարդ;

գյուղական – 116,4 հազ. մարդ:

Կոտայքի մարզը գտնվում է ՀՀ տարածքի կենտրոնում և միակ մարզն է, որը միջպետական սահման չունի ՀՀ հարևան որևէ պետության հետ: Այն հարավարևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

2022թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 11.2 %,
- գյուղատնտեսություն 8.5 %,
- շինարարություն 12.8 %,
- մանրածախ առևտուր 4.8 %,
- ծառայություններ 3.1 %:

Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաձյուղ տնտեսություն ունեցող մարզերից է:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն արդյունաբերությունն է: Մարզը մեծ դեր ունի էներգետիկայի ոլորտում: Մարզի արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ոլորտները.

ա) սննդամթերքի և խմիչքների արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի

և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, այլուրի, խմիչքների արտադրություն, ծխախոտային արտադրատեսակների արտադրություն),

բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրատեսակների արտադրություն (ապակու և ապակե արտադրատեսակների արտադրություն, ցեմենտի արտադրություն),



զ) հիմնական մետաղների արտադրություն, (թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն),

դ) ոսկերչական արտադրատեսակների, ոչ թանկարժեք զարդերի արտադրություն.

Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան–Սևան ավտոմայրուղին և Երևան–Հրազդան–Իջևան երկաթգիծը:

Աղյուսակ 13: Արագածոտնի մարզի հիմնական վիճակագրական տվյալները, 2016-2020թթ

	2018	2019	2020	2021	2022
Մարզի մշտական բնակչության թվաքանակը հունվարի 1-ի դրությամբ, 1 000 մարդ	251.6	250.9	251.2	251.1	253.8
այդ թվում՝ քաղաքային	137.4	136.8	136.8	137.0	137.4
գյուղական	114.2	114.1	114.4	114.1	116.4
Բնական աճի գործակիցը, 1 000 բնակչի հաշվով	3.7	3.1	-2.5	1.1	5.3
Համախառն ներքին արդյունք (շուկայական գներով), մլն. դրամ	409 454.4	413 471.6	409 697.9	470 260.9	...
Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն. դրամ	208 396.3	220 011.3	253 870.3	279 869.0	308 638.0
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, ընթացիկ գներով, մլրդ. դրամ	72.9	70.6	73.7	78.6	86.5
Շինարարության ծավալը, ընթացիկ գներով մլն. դրամ	24 330.1	26 769.9	25 182.2	50 112.0	76 187.4
Ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական	7.3	13.8	14.8	23.4	16.3



բեռնաշրջանառությունը, մլն. տոննա-կմ					
Ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառությունը, մլն. ուղևոր-կմ	128.9	125.0	34.7	46.8	97.5
Կապի ծառայությունների հասույթը, ընթացիկ գներով, մլն. դրամ	7 691.7	7 864.2	8 472.3	9 162.0	9 808.9
Մանրածախ առևտրի շրջանառությունը, մլն. դրամ	64 981.4	71 181.8	69 930.0	77 388.9	83 212.7
Ծառայությունների ծավալը, մլն. Դրամ	108 881.8	121 195.4	53 490.1	56 143.3	81 980.1
Սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ, %	102.3	101.6	100.1	108.2	108.7
Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ, %	102.3	97.8	95.7	107.4	110.9
Աշխատանքային ռեսուրսները, 1 000 մարդ	...	219.5	216.0	217.1	191.2
որից՝ զբաղվածներ	...	101.0	102.7	103.7	86.3
գործազուրկներ	...	26.3	25.8	22.8	18.9
Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	...	137 388	146 076	154 056	163 643
Առևտրային կազմակերպությունների արտադրանքի, ապրանքների, ծառայությունների արտադրության և իրացման վրա կատարված ծախսերը, մլն.դրամ	191 729.2	240 929.1	165 643.6	236 499.9	270 193.0
Առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող հաստատությունների քանակը	47	47	46	45	45
Գրանցված հանցագործությունների	2 179	1 929	2 180	2 428	2 519



քանակը					
Կենսաթոշակատուների թվաքանակը տարեվերջին, մարդ	36 902	37 666	38 180	38 582	39 418
Նպաստառու ընտանիքների քանակը, դեկտեմբերի 31-ի դրությամբ	8 492	7 897	8 067	7 900	6 997
Նախադպրոցական հաստատությունների քանակը	53	54	54	60	56
Հանրակրթական դպրոցների քանակը	101	101	101	100	100
Պետական մասնագիտացված թատրոնների քանակը	1	-	-	-	1
Գործող թանգարանների քանակը	5	5	5	5	5
Գրադարանների քանակը	57	53	52	51	51
Մարզական կազմակերպությունների քանակը	14	14	14	12	12

Նաիրի (Եղվարդ) համայնք

Համայնքի մասին մանրամասները ներկայացված են ստորև բերված աղյուսակներում.

Աղյուսակ 14: Բնակչություն, սոցիալական կազմը

2019	
1. Մշտական բնակչության թիվը	25993
2. Գրանցված ծնունդների թիվը	322
3. Մահացածների թիվը	176
4. Ամուսնությունների թիվը	119
5. Ամուսնալուծությունների թիվը	28
6. Տնային տնտեսությունների թիվը	6167
7. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների թիվը	519



8. Թոշակառուների թիվը	2197
9. Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը	2616

Աղյուսակ 15: Մշակութային, կրթական, մարզական հաստատություններ

2019	
1. Գրադարանների թիվը	5
2. Արվեստի դպրոցների թիվը	2
3. Երաժշտական դպրոցների թիվը	1
4. Նախադպրոցական հաստատությունների թիվը	3
5. Հանրակրթական դպրոցների թիվը	8
6. Սկզբնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների թիվը	1
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների թիվը	0
9. Մարզադպրոցների թիվը	1

Աղյուսակ 16: Ենթակառուցվածքներ

2019	
1. Էլեկտրական ենթակայանների թիվը	167
2. Գազաֆիկացման առկայություն համայնքում (այո, ոչ)	այո
3. Աղբավայրի առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
4. Գերեզմանատան առկայություն համայնքում (այո, ոչ)	այո
5. Քաղաքային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	185.1
6. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական	70



նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	
7. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց թիվը	այո-3
8. Ներհամայնքային երթուղիների առկայություն (այո, ոչ)	այո

Պռոշյան բնակավայր

Պռոշյանը բնակավայր է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, Մ-1 Երևան-Աշտարակ ավտոճանապարհի հարևանությամբ: Պռոշյանի բնակչությունը 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում էր 5779 մարդ:

6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

6.1. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Մաքսային և լոգիստիկ կենտրոնը նախատեսվում է կառուցել ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Գ. Չաուշի խճուղի 5 հասցեում: Ըստ սեփականության վկայականի տարածքը զբաղեցնում է 19,3619 հա մակերես: Այն գտնվում է Երևանի կենտրոնից մոտ 11 կմ հյուսիս-արևմուտք, Մ-1 մայրուղու հարևանությամբ:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման:

Նախատեսվում է, որ Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնը կունենա վարչական շենք՝ սպասարկման սրահով, պահեստային, բեռնաթափման և տեսչական շենքեր, ավտոմեքենաների համար նախատեսված կայանատեղի և օժանդակ շինություններ: Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է ոմտ 1200 մետր:

Տարածքը տեղակայված է Պռոշյան բնակավայրի հարավային մասում՝ Մ1 մայրուղու հարևանությամբ: Դեպի ներկայացված տարածք մուտքը կլինի Մ1 մայրուղուց: Մոտակա բնակավայրերն են Քասախը և Երևանը: Հեռավորությունը Քասախ բնակավայրից մոտ 2500 մ է, իսկ Երևանի կենտրոնից՝ մոտ 11 կմ: Քանի որ տարածքը գտնվում է Պռոշյան բնակավայրի բնակելի թաղամասի մոտ, կան բազմաթիվ բնակելի շենքեր (տներ, խանութներ և այլն): Ամենամոտ բնակելի



շինությունը գտնվում է ներկայացված տարածքին շատ մոտ, որի հարևանությամբ սակայն չեն նախատեսվում մեծածավալ շինարարական աշխատանքներ: Այդ հատվածում հիմնականում իրագործվելու են բարեկարգման և փոքրածավալ շինարարական աշխատանքներ:

Նախատեսվող մասնաշենքերի ընդհանուր նկարագիր.

1-ին կառույց ՊԵԿ վարչական մասնաշենք – 0.00 ՆԻՇ (պարագիծ 185.9մ) գաբարիտային 46590*42600մմ

2-րդ կառույց Մուտքի անցում – 14600*7300մմ

3-րդ կառույց Պահակակետեր 4 հատ - 5500*5270մմ

4-րդ կառույց Ճաշարան – (պարագիծ 115մ) գաբարիտային 22830*45800մմ

5-րդ կառույց Լաբորատորիա - 42000*15250մմ

6-րդ կառույց - 0.00 ՆԻՇ (պարագիծ 240,6մ) գաբարիտային 82060*63760մմ

7-րդ կառույց Պահեստ - 181200*48000մմ

8-րդ կառույց Կաթսայատուն - 31800*12000մմ

9-րդ կառույց Պոմպակայան - 15000*10000մմ

10-րդ կառույց Ենթակայան - 15000*10000մմ

11-րդ կառույց Պոմպակայան վարչականի - 10400*6400մմ

12-րդ կառույց Միջանցիկ կամար - 11400*7400մմ

13-րդ կառույց Ատոկայանատեղիի մուտք (ստորգետնյա, վարչական) - 32020*15600մմ

6.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

ՀՀ ՊԵԿ-ի վարչական շենքերի և կենտրոնի կառուցման համար ձեռքբերված տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 19.3619 հա:

Նախատեսվում է կառուցել հետևյալ շինությունները՝

- ՊԵԿ վարչական մասնաշենք
- ԱՏԳ Վարչական մաս և սպասարկման սրահ
- Պահակակետ - 4 հատ



- Գլխավոր - մուտք անցագրային կետ
- Լաբորատորիա
- Ճաշարան և սպասարահ
- Կաթսայատուն
- Պոմպակայան
- Ենթակայան
- Կարգո և հավաքական բեռների զննման, բեռնման և բեռնաթափման մասնաշենք

Ընդհանուր կառուցապատումը զբաղեցնում է 14,075 հա տարածք, մնացած հատվածում (5,2 հա) կանչապատում, ճեմուղիներ, մայթեր: Ընդհանուր տարածքում կառուցվելու է 15 շինություն՝ առանձին մուտքերով բեռնատարների և մնացած ավտոմեքենաների համար, առանձին այցելուների համար ավտոկայանատեղի՝ առանձին մուտքով: Նախատեսվում է նաև հիմնել այգիներ, ժամանցային գոտիներ, ֆուտբոլի դաշտ, ինչպես նաև 2 հատ բեռների զննման և կշռման տեղ:

Նախատեսվում է կառուցել 400 ավտոկայանատեղի բեռնատարների համար, 32 տեղ բեռնաթափման համար, զննման և պահեստավորման տեղ, առանձնահատուկ բեռների համար՝ 10 տեղ և 44 տեղ ալգելափակված բեռներ համար:

ՊԵԿ վարչական մասնաշենքը ունի 2 ստորգետնյա և 15 վերգետնյա հարկեր: Ընդհանուր շենքի ներքին մակերեսը կազմում է 17500քմ, որից 1000քմ աստիճանավանդակները և վերելակները: 980քմ տարածք է զբաղեցնում սանհանգույցները: Բոլոր հարկերում առանձնացված են սանհանգույցները, ինչպես նաև ամեն հարկում կան հաշմանդամների համար նախատեսված սանհանգույցներ: Բոլոր մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ և էլեկտրական վերելակներ՝ հաշմանդամների համար:

Առանձին մուտքով -2 ստորգետնյա հարկում (1760քմ) նախատեսվում է 46 ավտոմեքենայի համար նախատեսված ավտոկայանատեղի: Հարկում են գտնվում նաև կապի սենյակ՝ 20քմ, ռեգեովուար՝ 20,5քմ, էլ ցանցի համար նախատեսված սենյակ՝ 7քմ, 3 հատ սանհանգույց՝ 13,5, 2 հատ ծխացող աստիճանավանդակ՝ 45քմ և մուտքերը դեպի վերելակներ: Հարկը հանդիսանում է նաև ապաստարան՝ արտակարգ իրավիճակների դեպքում:

Մյուս առանձին մուտքով -1 ստորգետնյա հարկում (1755քմ) նախատեսվում 48 ավտոմեքենայի համար նաժատեսված ավտոկայանատեղի: Հարկում են գտնվում նաև ցանցի սենյակը՝ 42քմ, էլ ցանցի համար նախատեսված սենյակ՝ 7քմ, 3 հատ սանհանգույց՝ 13,5քմ, 2 հատ ծխացող աստիճանավանդակ՝ 45քմ և մուտքերը դեպի վերելակներ:



1-ին հարկում (1401քմ) նախատեսվում է երկու մուտք և երկու ելքով նախասրահ՝ 100քմ, նախասրահ՝ 58քմ, միջանցք՝ 191քմ, ընդհունարան՝ 92 քմ, սրճարան՝ 412քմ, հանգստի գոտի՝ 2 110քմ, 20 հոգանոց դահլիճ՝ 76,5քմ, սպասարան՝ 75,5քմ, խոհանոց՝ 23քմ, տեխնիկական սենյակ՝ 16,6քմ, ասիտիճանավանդահներ և վերելակներ՝ 81,5քմ:

2-րդ հարկում (1321քմ) նախատեսվում է ճաշարան 250 հոգու համար, իր առանձին խոհանոցով՝ 250քմ, նախասրահ՝ հանգստի գոտիով և տեխնիկական սենյակ:

3-րդ հարկում նախատեսվում է մարզասրահ՝ անձնակազմի համար, ինչպես նաև հանդերձարաններ և լոգասենյակներ:

4-րդ հարկում նախատեսված է դահլիճ՝ 160 հոգու համար, հանդիպումների սենյակ և աշխատատեղեր:

5-րդ հարկից մինչև 10-րդ հարկ հատակագիծը կրկնվում է:

11-րդ հարկում նախատեսվում է ՊԵԿ նախագահի սենյակը, 50 հոգանոց դահլիճ և 35 հոգու համար նախատեսված աշխատատեղ:

12-րդ հարկից մինչև 15-րդ կրկնվող հարկերում (421քմ) նախատեսվում է 86 հոգու համար աշխատատեղեր:

Շենքի ջեռուցումն ու հովացումը իրականացվելու է կենտրոնացված համակարգի միջոցով՝ առանձին պոմպակայնով: Որպես ջեռուցման սարքեր, նախատեսվում է օգտագործել հատակային «Ֆանկոյլ» ագրեգատներ, որոնք սնվում են կաթսայատանը տեղադրված կոնդենսացիոն կաթսաներից: Այս օդափոխիչները նաև օգտագործվում են շենքը հովացնելու համար: Շենքի արտաքին երեսապատումը նախատեսվում է իրականացնել ժամանակակից մեթոդներով՝ պահպանելով շենքի գեղեցիկ տեսքը: Երեսապատումը նախատեսվում է իրականացնել ջերմախնայող և էկոլոգիապես անվտանգ նյութերով: Նախագծված են լուսավորության հետևյալ տեսակները.

1. աշխատանքային՝ բոլոր շենքերում
2. 2վթարային՝ տարհանման և բոլոր հատուկ նշանակության սենյակներում՝ վերալիցքավորվող մարտկոցներով լամպերի օգտագործմամբ.
3. ահազանգային – բոլոր ելքերում:

ԱՏԳ Վարչական մասը և սպասարկման սրահը 2 ստորգետնյա և 2 վերգետնյա հարկերով կազմում են ընդհանուր առմամբ մոտ 6000քմ մակերես:

Առանձին մուտքով -2 ստորգետնյա հարկում (1486քմ), որը որ ծառայում նաև որպես ապաստարան արտակարգ իրավիճակներում, նախատեսվում է 35 ավտոկայանտեղի, սանհանգույցներ, կապի և ցանցի սենյակներ: Մյուս առանձին



մուտքով -1 ստորգետնյա հարկում (1482քմ)՝ 32 ավտոկայանատեղի, սանհանգույցներ, ցանցի և տեղնիկական սենյակ:

1-ին հարկում (1520քմ) նախատեսվում են սմասարկման սենյակներ, աշխատատեղեր և սանհանգույցներ: 2-րդ հարկում (1520քմ)՝ առանձին աշխատասենյակներ և ընդհանուր աշխատատեղեր:

Շենքը ունի 3 առանձին մուտք և մեկ առանձին անցում դեպի պահեստ: Պահակակետերը (22քմ) ունեն հանգստի սենյակներ և սանհանգույցներ: Գլխավոր մուտքը աճանձին շինությունն է՝ 50քմ մակերեսով, երկու առանձին սենյակներով:

Լաբորատորիան նախատեսվում է 2 վերգետնյա հարկով, ընդհանուր հարկը՝ 600քմ մակերեսով: Ճաշարանը և սպասարահը՝ 720քմ մակերեսով և առանձին սանհանգույցներով ու խոհանոցով: Պոմպակայանը՝ 150քմ, ծառայելու է պահեստի, ճաշարանի, ԱՏԳ կենտրոնի և լաբորատորիաի համար: Ենթակայանը՝ 150քմ, ծառայելու է բոլոր շենք-շինությունների համար:

Կարգո և հավաքական բեռների զննման, բեռնման և բեռնաթափման մասնաշենքը նախատեսվում է կառուցել ընդհանուր մոտ 9900քմ մակերեսով: Պահեստը բաժանված է 4 հատվածի՝ բաց շվաքարան (560քմ), առանձին սառնարանայի մաս (915քմ), պահեստ (4540քմ), աշխատանքային 2 հարկ (1400քմ): Ունի 54 մուտք բեռնակիր մեքենաների համար և միջանցքներ՝ դրանց տեղաշարժման համար:

Կաթսայատան տեխնիկատեխնոլոգիական ցուցանիշներ.

- Կաթսա գազային այրիչով REX K 130 (մեկը պահուստային) Q=1300Կվտ – 5հատ
- Կաթսայի գազի ծախս (յուրաքայտորը)- 137մ³/Ժ – 5 հատ, ընդամենը 685
- Ծխագազերի արտանետման քանակ (յուրաքայտորը) - 2221կգ/Ժ – 5 հատ
- Մետաղական ծխատար Ø400, H=8մ – 5 հատ

Գործունեության իրականացման շրջանակներում նախատեսվում է տարածքի կանաչապատում: Մանրամասները ներկայացված են աշխատանքային նախագծում:

Աշխատանքային նախագծի բացատրագիր.

	Չափի միավորը	Քանակը
ՆԵՐՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		



1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԱԾՔ	Քառ. մ. հա	1
2	ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԱՇՏԱԿԻ ՀԱՆՈՒՅԹ	Խոյր. մ.	2
3	ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՄԱՆՐԱՀԱՏԻԿ ԱՍՖԱԼՏԱԲԵՏՈՆԵ ՇԵՐՏ-50 մմ	Քառ. մ.	3
4	ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ԽՈՇՈՐԱՀԱՏԻԿ ԱՍՖԱԼՏԱԲԵՏՈՆԵ ՇԵՐՏ 70 մմ	Քառ. մ.	4
5	ԲԻՏՈՒՄՈՎ ՏՈԳՈՐՎԱԾ ԽՃԻ ՇԵՐՏ-100 մմ	Քառ. մ.	5
6	ԽՃՈՎ ՏՈՓԱՆՎԱԾ ՇԵՐՏ – 150 մմ	Քառ. մ.	6
7	ՄԱՅԹԵՐԻ ԵՎ ԱՍԱԼՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՆՐԱՀԱՏԻԿ ԱՍՖԱԼՏԱԲԵՏՈՆԵ ՇԵՐՏ-50 մմ	Քառ. մ.	7
8	ԽՃՈՎ ՏՈՓԱՆՎԱԾ ՇԵՐՏ – 100 մմ	Քառ. մ.	8
9	ԲԵՏՈՆԵ ԾԱԾԿՈՒԹՅՈՎ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ-100 մմ	Խոյր. մ.	9
10	ԽՃՈՎ ՏՈՓԱՆՎԱԾ ՇԵՐՏ-100 մմ.	Քառ. մ.	10
11	ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԱՇՏԱԿԻ ՀԱՆՈՒՅԹ	Խոյր. մ.	11
ԱՐՏԱՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ			
	ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՏԱՇՏԱԿԻ ՀԱՆՈՒՅԹ	Խոյր. մ.	
	ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՆՐԱՀԱՏԻԿ ԱՍՖԱԼՏԱԲԵՏՈՆԵ ՇԵՐՏ-50 մմ	Քառ. մ.	
	ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՀԱՏԻԿ ԱՍՖԱԼՏԱԲԵՏՈՆԵ ՇԵՐՏ- 70 մմ	Քառ. մ.	
	ԲԻՏՈՒՄՈՎՏՈԳՈՐՎԱԾ ԽՃԻ ՇԵՐՏ-100 մմ	Քառ. մ.	
	ԽՃՈՎ ՏՈՓԱՆՎԱԾ ՇԵՐՏ-150 մմ.	Քառ. մ.	
	ԲԱԶԱԼՏԵ 150*300 մմ ԵԶՐԱՔԱՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ՀԻՄՔԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՈՎ	Գծ. մ.	
ՀՈՂԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ			
	ՆԵՐՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐԸ	




1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԱԾՔ	Քառ. մ. հա	1
2	ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԱՇՏԱԿԻ ՀԱՆՈՒՅԹ	Խոյր. մ.	2
3	ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՄԱՆՐԱՀԱՏԻԿ ԱՍՖԱԼՏԱԲԵՏՈՆԵ ՇԵՐՏ- 50 մմ.	Քառ. մ.	3
4	ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ԽՈՇՈՐԱՀԱՏԻԿ ԱՍՖԱԼՏԱԲԵՏՈՆԵ ՇԵՐՏ-70 մմ	Քառ. մ.	4
5	ԲԻՏՈՒՄՈՎՏՈՎՈՐՎԱԾ ԽՃԻ ՇԵՐՏ-100 մմ.	Քառ. մ.	5
6	ԽՃՈՎ ՏՈՓԱՆՎԱԾ ՇԵՐՏ-150 մմ.	Քառ. մ.	6
7	ՄԱՅԹԵՐԻ ԵՎ ԱՍԱԼՎԱԾՔԼԵՐԻ ՄԱՆՐԱՀԱՏԻԿ ԱՍՖԱԼՏԱԲԵՏՈՆԵ ՇԵՐՏ-50 մմ.	Քառ. մ.	7
8	ԽՃՈՎ ՏՈՓԱՆՎԱԾ ՇԵՐՏ-100 մմ.	Քառ. մ.	8
9	ԲԵՏՈՆԵ ԾԱԾԿՈՒՅԹՈՎ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ-100 մմ.	Խոյր. մ.	9
10	ԽՃՈՎ ՏՈՓԱՆՎԱԾ ՇԵՐՏ-100 մմ.	Քառ. մ.	10
11	ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԱՇՏԱԿԻ ՀԱՆՈՒՅԹ	Խոյր. մ.	11
12	ՀԵՏԻՈՏՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՐԵՄՊԱՏՈՒՄ ԳՈՒՆԱՎՈՐ ԲԵՏՈՆԵ ՍԱԼԻԿԼԵՐՈՎ ՏՈՄԵՏՈՎ - 60 մմ.	Քառ. մ.	12
13	ՀԱՐԹԵՑՆՈՂ ԱՎԱԶԻ ՇԵՐՏ-100 մմ.	Քառ. մ.	13
14	ԽՃՈՎ ՏՈՓԱՆՎԱԾ ՇԵՐՏ -100 մմ.	Քառ. մ.	14
15	ԲԱԶԱԼՏՈ 150*500 մմ. ԵԶՐԱՔԱՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ՀԻՄՔԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՈՎ	Գծ. մ.	15
16	ԲԱԶԱԼՏԵ ՔԱՐԻՑ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ 300*150 ՄՄ. B 15 ԴԱՍԻ ԲԵՏՈՆԵ ՀԻՄՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՈՎ	Գծ. մ.	16
17	ՖՈՒՏԲՈՒԼԻ ԽԱՂԱԴԱՇՏ 17,0*37,0 մ.	Քառ. մ.	17
18	ՀԱՆԴԻՄԱՏԵՄԻ ՆՏՍԱՏԵՂ	Քառ. մ.	18
19	ԿԱՆԱԶԱՊԱՏ ՏԱՐԱԾՔ	Քառ. մ.	19
20	ՀԵՏԱՊԱՏԵՐԻ ՏԵՐԱՍՄԱՆՆԵՐԻ 4 հենապատ L=182 մ., միջինը h=700 ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ B20 ԲԵՏՈՆԻՑ	Խոյր. մ.	20



21	ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ԵՐԵՍՊԱՏՈՒՄ ԲՐԵԿՉԱ ՏԻՊԻ ՔԱՐԵՐԻՑ	Քառ. մ.	21
22	ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ԳԼԽԱՔԱՐ ԲԱԶԱԼՏԵ ՔԱՐԻՑ-800 մ	Գծ. մ.	22
23	ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ՀԻՄՔԵՐԻ 182*08 մ/ B 15 ԲԵՏՈՆԻՑ	Գ՛ծ. մ.	23
	ԱՐՏԱՀՐԱՊԱՐԱՐԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	Խոր. մ.	
	ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՏԱՇՏԱԿԻ ՀԱՆՈՒՅԹ	Քառ. մ.	
	ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՆՐԱՀԱՏԻԿ ԱՍՖԱԼՏԱԲԵՏՈՆԵ ՇԵՐՏ 50 մմ	Քառ. մ.	
	ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՀԱՏԻԿ ԱՍՖԱԼՏԱԲԵՏՈՆԵ ՇԵՐՏ 70 մմ	Քառ. մ.	
	ԽՃԱՅԻՆ ՇԵՐՏ 100 մմ	Քառ. մ.	
	ԲԱԶԱԼՏԵ 150*300 մմ. ԵԶՐԱՔԱՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ՀԻՄՔԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՈՎ	Գծ. մ.	

Պատկեր 9: Գլխավոր հատակագիծ



Շինության տեսահսկման համակարգ

Շինության տեսահսկման համակարգը նախատեսված է իրական ժամանակում շուրջօրյա տեսահսկման և տեսաձայնագրությունների պահպանման համար: Տեսահսկման համակարգը ապահովում է բոլոր տեսախցիկների պատկերների փոխանցումը մոնիտորինգի էկրաններին և տեսաձայնագրությունների պահպանումը համապատասխան տվյալների պահոցներում: Պահոցի տարողության հաշվարկը կատարվում է բոլոր տեսախցիկների՝ առնվազն 30 օր շուրջօրյա ձայնագրություն պահպանման սկզբունքով:

Ինչ է տեսահսկումը

Մարդու տեսանկարը անձնական տվյալ է, որը թույլ է տալիս ուղղակի կամ անուղղակի նույնականացնել անձին: Հետևաբար, տեսախցիկի միջոցով իրականացվող տեսանկարահանումը և հսկողությունը (այսուհետ՝ տեսահսկում), որպես անձնական տվյալի մշակում, նախատեսում է անձնական տվյալի մշակման, օգտագործման և պաշտպանության պահանջների և սկզբունքների ապահովում: Տեսահսկման համակարգը տարածքի, միջոցառման, գործունեության կամ անձի տեսա/ձայնահսկումն է էլեկտրոնային սարքավորման միջոցով: Համակարգը կարող է աշխատել տեսագրման ռեժիմով (երբ տեսագրվում է) և ուղիղ, իրական ժամանակի



ռեժիմով տվյալների փոխանցմամբ: Քանի որ տեսահսկմամբ խախտվում է անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքը, այդ իսկ պատճառով տեսահսկողը պետք է տեսահսկման համակարգ տեղադրելուց առաջ գնահատի տեսահսկման իրական կարիքն ու նպատակը, համակարգի ազդեցությունը անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի վրա, և համոզված լինի, որ մեկ այլ միջոցով հնարավոր չէ հասնել հետապնդվող նպատակին:

Մասնավոր կազմակերպությունների շենքերի տեսահսկում

Մասնավոր կազմակերպությունների տեսահսկումն արվում է անվտանգության ապահովման, անձանց անվտանգությունը և գույքը վնասներից պաշտպանելու, գաղտնի տեղեկատվության պաշտպանության նպատակով: Տեսախցիկը տեղադրվում է շենքերի մուտքի մոտ: Շենքերի ներսում՝ աշխատավայրում տեսահսկման համակարգը տեղադրվում է բացառիկ դեպքերում, եթե դա անհրաժեշտ է անձանց անվտանգությունը և գույքը վնասներից պաշտպանելու, ինչպես նաև գաղտնի տեղեկատվությունը պաշտպանելու նպատակով, եթե այլ միջոցներով հնարավոր չէ հասնել այդ նպատակներին: Տեսահսկումն արգելվում է հանդերձարաններում, սանհանգույցներում, հանգստի սենյակներում, լոդասենյակներում և մասնավոր պահարաններում: Աշխատավայրում տեսահսկման համակարգ տեղադրելուց առաջ տեսահսկողը պարտավոր է աշխատակազմին գրավոր տեղեկացնել համակարգի և աշխատողների իրավունքների մասին: Աշխատակիցներին անհրաժեշտ է բացատրել տեսահսկման անհրաժեշտությունը, նպատակը և նրանց իրավունքները:

Տեսահսկման համակարգի բաղկացուցիչներն են.

- Տեսախցիկներ
- Հորիզոնական մալուխային համակարգ
- Մերվերային և ցանցային սարքավորումներ

Նախագծված է IP տեսակի տեսահսկման համակարգ: Հորիզոնական մալուխային համակարգը իրականացված է 5 կարգի գալարագույգ մալուխներով, 10 Գբ/վ թողունակության հնարավորությամբ: Տեսախցիկները եկող մալուխները կենտրոնացվում են 33U սերվերային պահարանում, որը տեղադրված է արտադրական տարածքում (տես հեռահաղորդակցման համակարգ): Մալուխները միացվում են 33U պահարաններում գտնվող 24 և 48 մուտք ունեցող կոմուտատոր-բաժանարարներին (PoE) կոմուտացվելով պասիվ բաժանարարներում: Տեսաձայնագրությունները ձայնագրելու համար նախատեսված է 4 հատ կոշտ սկավառակ (HDD)՝ յուրաքանչյուրը 8TB հիշողությամբ:



Ներքին կիրառման գմբեթաձև տեսախցիկներ

Նախատեսված են թվով 11 IP գմբեթաձև տեսախցիկներ: Այս տեսախցիկները նախատեսված շինության գրասենյակային տարածքների տեսահսկման համար:

Տեսախցիկները ունեն գիշերային տեսահսկման հնարավորություն և 20մ IR-լուսավորման հեռավորություն, 2.8մմ ֆիքսված ուսայնյակ, 2MPx թույլտվություն և IP 67 պաշտպանվածության բարձր աստիճան:

Արտաքին կիրառման գլանաձև տեսախցիկ

Նախատեսված են թվով 44 արտաքին կիրառման 2 տեսակի IP տեսախցիկներ:

- Տեսախցիկները ունեն գիշերային տեսահսկման հնարավորություն և 30մ IR-լուսավորման հեռավորություն, 2.8 ֆիքսված ուսայնյակ, 4 MPx թույլտվություն և IP 67 պաշտպանվածության բարձր աստիճան: Այս տեսախցիկները նախատեսված են շինության արտաքին և ներքին տարածքների տեսահսկման համար:
- Տեսախցիկները ունեն գիշերային տեսահսկման հնարավորություն և 30մ IR-լուսավորման հեռավորություն, 4.0 ֆիքսված ուսայնյակ, 4 MPx թույլտվություն և IP 67 պաշտպանվածության բարձր աստիճան: Այս տեսախցիկները նախատեսված են շինության արտաքին և ներքին տարածքների տեսահսկման համար:

Տեսախցիկները պատերին ամրակցելու համար օգտագործվում են հատուկ տուփ-ամրակներ, որտեղ կատարվում են տեսախցիկի անհրաժեշտ միացումները:

Տեսահսկման համակարգի լարանցումը Տեսահսկման համակարգի լարանցումը իրականացվում է մետաղական մալուխատարերով և պլաստմասե ձկախողովակներով: Ուղղահայաց մալուխային համակարգի մալուխները մոնտաժվում են ուղղահայաց կապուղում մոնտաժված մալուխատարում: Հորիզոնական մալուխային համակարգի մալուխները տեղադրվում են հորիզոնական մետաղական մալուխատարերում, որտեղից տեսախցիկներին են հասնում պլաստմասե ձկախողովակներով:

Տեսահսկման համակարգի սնուցումը

Տեսախցիկների սնուցումը իրականացվում է PoE տարբերակով:


Տեսահսկման համակարգի անխափան աշխատանքի ապահովումն իրականացվում է անխափան սնուցման սարքի միջոցով, որոնք տեղադրված են սերվերային




պահարաներում (տես հեռահաղորդակցման համակարգ) :

Տեսախցիկների տեղադրման օրինակներ

Ներքին կիրառման գմբեթածն տեսախցիկի տեղադրումը հիմնական առաստաղին



Արտաքին կիրառման գլանածն տեսախցիկի տեղադրումը արտաքին պատին





6.3. Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը

Մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման աշխատանքները տևելու են 3.5-4 տարի, հողային աշխատանքները՝ մոտ 2 տարի:

7. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի այլընտրանքային տարբերակները դիտարկվում են երկու առումով:

7.1. «Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակ

«Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակը վերաբերում է այն իրավիճակին, մաքսային և լոգիստիկ կենտրոնը չի կառուցվում: «Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակը խոչընդոտ կհանդիսանա ՀՀ տնտեսական զարգացման, ինչպես նաև աշխատատեղերի բացման համար:

Մաքսային և լոգիստիկ կենտրոնի, ինչպես նաև տրամադրվող ծառայությունների հասանելիության բացակայությունը՝ զգալի սոցիալական և տնտեսական հետևանքներ կունենա ապագայում, քանի որ.

- կխոչընդոտի ներկայիս և ապագա տնտեսական զարգացմանը և ներդրումներին,
- կսահմանափակի սոցիալ-տնտեսական զարգացումը, ինչպես նաև համայնքների և այլ հասարակական կառույցների և հանրային ծառայությունների ներգրավվածության հնարավորությունները,
- կխոչընդոտի սոցիալական ծառայությունների մատուցմանը՝ ներառյալ հանրային առողջությունը և աղքատության վերացումը:

Արդյունքում, <<Ոչ մի գործողություն>> տարբերակը՝ չի համարվում կենսունակ կամ ընդունելի այլընտրանքային տարբերակ առաջարկվող ծրագրին:

7.2. Ծրագրի առավելությունները

Ծրագիրը նպատակ ունի ստեղծել Հայաստանում կենտրոնացված մաքսային և լոգիստիկ կենտրոն, խաթարել ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացումը, ենթակառուցվածքների զարգացումը, ինչպես նաև համակարգել և կենտրոնացնել ՀՀ ՊԵԿ անձնակազմը և տրամադրվող ծառայությունները: Ծրագիրը կխթանի նոր ենթակառուցվածքների ստեղծմանը, կստեղծի ուղղակի և անուղղակի աշխատատեղեր, կգրավի ներդրողների ուշադրությունը, կնպաստի ՀՀ և մասնավորապես հարակից տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացմանը: Պլանավորված Ծրագիրը նախատեսված է հասնելու հետևյալին.

- Կենտրոնացնել և համակարգել ՊԵԿ անձնակազմը և ծառայությունները;
- Պահպանել և բարելավել ՀՀ և տարածաշրջանային սոցիալ-տնտեսական



իրավիճակը;

- Ստեղծել մաքսային և լոգիստիկ կենտրոն՝ բազմաթիվ կնաչապատ տարածքներով;
- Մասանակցել համայնքների սոցիալական զարգացման գործընթացներին:

Ավելին, շինարարական աշխատանքները կիրականացվեն համայնքի անվտանգության և բարեկեցության համար առավելագույն հոգատարությամբ և հնարավորության դեպքում տեղական աշխատուժի ներգրավմամբ:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

8.1. Ջուր.

Տեղում առկա են բոլոր ենթակառուցվածքները, այդ թվում Վեռլիա ջուր ՓԲԸ ջրագիծը և կոյուղատարը: Մինչև շինարարական աշխատանքների սկիզբը, «Վեռլիա Ջուր» ընկերության հետ կկնքի նոր պայմանագիր և կվերսկսվի ջրամատակարարումը ու կսկսի գործել կոյուղին:

Ջրի ծախսը խմելու և տնտեսական կարիքների համար

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն СНиП 2.04.01-25 "Внутренний водопровод и канализация зданий", նորմերի:

Մեկ բանվորի ջրօգտագործման նորմը՝ - 25 լիտր

Օրական, մեկ վարչական աշխատողին – 16 լիտր

Շինարարական աշխատանքային ռեժիմը – առավելագույնը 48 ամիս, 22 օր/ամիս, օրը 8 ժամ/օր:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է.

$$W_{\text{խ.տ.}} = n \times N \times T_1 + n_1 \times N_1 \times T_2, \text{ որտեղ}$$

n – Ինժեներատեխնիկական /ԻՏ/ աշխատողների թվաքանակն է՝ 22 մարդ

N – ԻՏ աշխատողների ջրածախսի նորմատիվն է, 0.016 մ³օր/մարդ

T_1 – ԻՏ աշխատողների աշխատանքային օրերի ընդհանուր թիվը- 1056,

n_1 –բանվորների թվաքանակն է (օրական)- 118 մարդ,

N_1 - բանվորների ջրածախսի նորմատիվն է - 0.025 մ³օր/մարդ,

T_2 - աշխատանքային օրերի թիվն է - 1056.

$$W_{\text{խ.տ.}} = 22 \times 0.016 \text{ մ}^3 \times 1056 + 118 \times 0.025 \text{ մ}^3 \times 1056 = 3485 \text{ մ}^3/2\text{ին}, 3.3 \text{ մ}^3/օր:$$

Ջրի ծախսը տրանսպորտային միջոցների անիվների լվացման համար

Շինարարության փուլում մեքենաների լվացումը նախատեսվում է մեկ կամ երկու մեքենա: Տեղադրվելու են 2 հատ լվացման կետ, յուրաքանչյուրի ջրաքանակի նորման ընդունված է 120 լ/հատ:

$$Q_2 = 120 \times 2 \times 2 = 480 \text{ լ կամ } 0.48 \text{ մ}^3/օր$$

$$\text{Շին.ընթացքում՝ } 0.48 \text{ մ}^3/օր \times 1056 \text{ օր} = 506.9 \text{ մ}^3/2\text{ին}$$



Ջրի ծախսը փոշեառաջացման օջախների ջրցանի համար
Այդ ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_1 = S \times K \times T,$$

Որտեղ՝ S – շինհրապարակի թրջվող մակերեսն է, 2600 մ²,

K - ջրցանման նորման – 0.0015մ³/1մ²

T – ջրցանի /տաք և չոր եղանակի/ օրերը, 160 օր/տարի կամ 640 օր/շին:

Այսպիսով՝

$$V_1 = 2600 \times 0.0015 \times 640 = 2496 \text{ մ}^3/\text{շին:}$$

Միջին օրեկանը կազմում է 3.9մ³:

Շահագործման փուլում ջրցան չի նախատեսվում:

Ընդամենը շինարարության ընթացքում ջրապահանջը կկազմի՝

$$3485 + 506.9 + 2496 = 6487.9 \text{ մ}^3/\text{շին:}$$

Արտահոսք.

Ջրցանը արդյունքում արտահոսք չի առաջանում

Անիվների լվացման ընթացքում ջրի կորուստը կազմում 10 տոկոս, այստեղից արտահոսքը կկազմի՝ $506.9 \times (1 - 0.1) = 456.2 \text{ մ}^3/\text{շին:}$

Կենցաղային ջրօգտագործման կորուստները կազմում են 5 տոկոս, այստեղից՝

$$3485 \times (1 - 0.05) = 3310.7 \text{ մ}^3/\text{շին:}$$

Ընդամենը արտահոսքը կկազմի՝ $456.2 + 3310.7 = 3766.9 \text{ մ}^3/\text{շին:}$

Տարածքի բոլոր կեղտաջրերը հավաքվում են մեկ ցանցի մեջ և միանում Վեռլիա ջուր ՓԲԸ կոյուղատարին:

8.2. Օգտագործվող նյութեր,

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

- մալուխ,
- մետաղ՝ ալյումին, պողպատ,
- ներկ,
- մեկուսիչ նյութեր
- բետոն,
- խիճ,
- փայտանյութ:

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և



անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

9.1. Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները

9.1.1. Օդային ավազան.

Մաքսային և լոգիստիկ կենտրոնի շինարարության ընթացքում կառաջանան մի շարք նյութերի արտանետումներ: Հիմնական արտանետումը՝ փոշին, կառաջանա հողի փորման, բեռնման և տեղափոխման ընթացքում: Շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ կառաջանան նաև դիզվառելիքի այրման արգասիքներ՝ ազոտի, ծծմբի և ածխածնի օքսիդներ, պինդ մասնիկներ:

ա) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները

Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը կատարվել է ըստ «ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ», Минпромстрой СССР, 1987:

$$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600 \text{ տ/ժամ (քանաձև 1), որտեղ}$$

P_1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտերում, 0.05

P_2 - 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P_3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.0

P_4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.4 (հաշվի առնելով նաև ջրցանը)

P_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.4

P_6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G - հանվող գրունտի և հողի քանակը՝ 36654.8 մ³ ամբողջ շինարարության ընթացքում, կամ 58648 տ:

Շինարարական աշխատանքները իրականացվելու են 3.5 – 4 տարի, որից հողային աշխատանքները՝ 18 ամիս, կամ 520 օր:

$$G = 58648 \text{ տ} : 520 \text{ օր} : 8 \text{ ժամ/օր} = 11.8 \text{ տ/ժամ:}$$

$$Q_1 = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.4 \times 0.4 \times 11.8 \times 10^6 \times 0.5 \times 1.0) / 3600 = 0.26 \text{ գ /վրկ:}$$

Արտանետումների քանակը շինարարական աշխատանքների արդյունքում կկազմի՝

$$0.26 \text{ գ/վրկ} \times 520 \text{ օր} \times 8 \text{ ժամ} \times 3600 \text{ վրկ/ժամ} : 1\,000\,000 \text{ գ/տ} = 3.89 \text{ տ:}$$

Վնասակար նյութերի արտանետումներ են սպասվում նաև շինարարական և տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ, վառելիքի այրման ընթացքում:

Վառելյան նյութի օգտագործումը



Վառելանյութը կարող է օգտագործվել մեքենաների և բեռնատարների շահագործման, ըստ շինարարական գործունեության պահանջի: Հիմնականում օգտագործվելու է դիզելային վառելիք:

Մեքենաների և բեռնատարների վառելիքի ծախսը կարող է տարբերվել, կախված մեքենայի տեսակից, տատանվելով 80 - 90 լ/օր սահմաններում, ամբողջ շինարարության ընթացքում վառելիքի հաշվարկային ծախսը կկազմի 81900 լ կամ 69.6 տ:

Վառելանյութի պահպանման համար պետք է հատկացվի հատուկ տարածք: Տարածքը պետք է ունենա բետոնե հարթակ և արտահոսքերի հավաքման համակարգ:

բ) Դիզելային վառելիքի այրման արգասիքները

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17: Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO _x	CH	ՑՕՍ	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Հաշվի առնելով, որ տարածքում աշխատելու են նոր գնված տեխնիկական միջոցներ, պարկի տարիքի հետ կապված գործակիցները չեն կիրառվում:

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 18-ում, որում միավորվել են ածխաջրածինները, ազոտի օքսիդները:

Աղյուսակ 18: Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները, տ/շին.ժամ
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	36.4	2.53
	Ածխաջրածիններ	8.403	0.58
	NO _x	42.422	2.95
	Մուր	4.3	0.3

Օծմբային անհիդրիդ

Օծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են էլնելով այն



մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO²-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$ESO_2 = 2 \Sigma k_s b$, որտեղ`

k_s -ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է` 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է` 14.0 տ/շին.ժամանակ:

$SO_2 = 2 \times 14 \times 0.002 = 0.28$ տ:

Ընդամենը շինարարական փուլում առաջացող արտանետումների քանակները բերված են աղյուսակ 19-ում:

Աղյուսակ 19: Շինարարության փուլի արտանետումները

N	Արտանետվող նյութի անվանումը	Արտանետումը, տ/շին.ժամ
1	Անօրգանական փոշի	3.89
2	Ածխածնի օքսիդ	2.53
3	Ածխաջրածաններ	0.58
4	Ազոտի երկօքսիդ	2.95
5	Մուր	0.3
6	Ծծմբային անհիդրիդ	0.28

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը, օդի աղտոտման մակարդակը գնահատվում է որպես ցածր: Ազդեցությունը ավելի նվազեցնելու նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի և հանվող գրունտի ջրցան, շինարարական տեխնիկան և ավտոմեքենաները պարբերաբար կստուգվեն և շարժիչները կկարգաբերվեն:

Բացի վերոնշյալից նախատեսվում է իրականացնել փոշու ելակետային և ընթացիկ գործիքային չափումներ, քանի որ գործունեության տարածքին մոտ կան բնակելի շինություններ: Փոշու գործիքային չափումների կետերը պետք է որոշվեն, իսկ մեթոդոլիգային պետք է մշակվի նախօրոք (մինչ շին.աշխատանքների սկիզբը): Չափումները պետք է իրականացվեն` փոշու մակարդակները ֆիքսելու և ցանկացած փոփոխություն արձանագրելու նպատակով: Դա թույլ կտա անընդհատ հետևել և լավ վիճակում պահպանել օդի որակը, իսկ անհրաժեշտության դեպքում անմիջապես իրականացնել համապատասխան միջոցառումներ` փոշու մակարդակի նվազեցման համար: Մանրամասները ներկայացված են ԲԿՊ-ում:

9.1.2. Ջրային ավազան

Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջերի հեռացման համար կտեղադրվեն շարժական բիոզուգարաններ` լվացարանով: Բիոզուգարանների մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից` պայմանագրային հիմունքներով:



Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է միայն աշխատողների խմելու նպատակների համար: Քանի որ տեղում կենցաղային հարմարություններ չեն նախատեսվում, աշխատողների կացությունը կազմակերպվելու է հարակից համայնքներում, յուրաքանչյուր օր անձնակազմը վերադառնալու է կացության վայր, որտեղ էլ կապահովվի բոլոր անհրաժեշտ սանիտարա-հիգիենիկ պայմանները:

9.1.3. Թափոնների կառավարում

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, տարածքում առաջացող երկու տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 179.2 մ³, որը կհավաքվի աղբամաններում և պարբերաբար կտեղափոխվի համայնքային կոշտ կենցաղային թափոնների աղբավայր:

Շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/՝ 80 մ³, ըստ առաջացման կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր:

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրականացվի մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների առաջացումը:

Քանի որ, շինարարական տեխնիկան և ավտոտրանսպորտը կսպասարկվեն ավտոսպասարկման կայաններում, այլ թափոնատեսակներ տարածքում չեն առաջանա: Այնուամենայնիվ, ֆորս-մաժորային իրավիճակներում հնարավոր արտահոսքերից խուսափելու համար բոլոր տեսակի յուղերը և քսայուղերը (կոմպրեսորային յուղ, արդյունաբերական յուղ և այլն) հավաքվելու և պահպանվելու են գործունեության տարածքում առանձնացված փակ սենյակում և տրամադրվելու են լիցենզավորված կազմակերպության՝ հետագա միջոցառումների իրականացման համար: Տեղափոխությունը ևս կիրականացվի լիցենզավորված կազմակերպության կողմից:

Կարևոր է նաև հաշվի առնել, որ տարածքում առկա են որոշ նյութեր, որոնք գործունեության իրականացման ընթացքում պետք է հեռացվեն տարածքից: Այդ նյութերը կհավաքվեն համապատասխան վայրում և կտեղափոխվեն համայնքի կողմից տրամադրված վայր՝ ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան: Այն նյութերը, որոնք պիտանի են օգտագործման, կտրամադրվեն ՀՀ Պետական Գույքի



Կոմիտեին: Տարածքից նախատեսվում է տեղավորել մոտ 200տ շին. աղբ:

9.1.4. Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածքում հողային ծածկույթի վրա էական բացասական ազդեցություններ չեն նախատեսվում, քանի որ բերրի հողաշերտի հզորությունը չի գերազանցում 10սմ-ն և առաջնորդվելով ՀՀ Կառավարության 2 նոյեմբերի 2017թ.-ի N 1404-Ն որոշումով, ներկայացված գործունեության շրջանակներում բերրի հողի հանում և պահեստավորում չի նախատեսվում: Բացի այդ տարածքում նախատեսվում են բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Հանված հողային զանգվածը օգտագործվելու է հետլիցքի և տարածքի բարեկարգման համար:

9.1.5. Կենսաբազմազանություն

Նախատեսվող գործունեության տարածքում շինարարական աշխատանքների ընթացքում որոշակի բացասական ազդեցության կենթարկվի տեղամասի բուսական ծածկույթը և կենդանական աշխարհը:

Ազդեցությունը իրականում չնչին է լինելու, քանի որ տարածքը փոքր է որպեսզի զգալի ազդեցություն լինի տարածաշրջանի կենդանական աշխարհի վրա: Բուսական աշխարհին հասցվող հավանական վնասը ևս չնչին է լինելու քանզի տարածքը աղքատ է բուսական աշխարհով:

Ըստ հետազոտությունների, մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման համար նախատեսված տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ: Կարևոր է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ ներկայացվող տարածքը երկրորդ տարիներ ենթարկվել է մարդածին ազդեցության:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

9.1.6. Պատմամշակութային հուշարձաններ

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Ներկայացված գործունեությունը չի կարող որևէ բացասական ազդեցություն ունենալ պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտի վրա, քանի որ



տարածքում և դրա հարևանությամբ նմանատիպ օբյեկտներ չկան:

9.1.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ

Գործունեության վայրը չի առնչվում վայրի բնության կամ այլ արգելոցի, ազգային պարկի, զբոսայգու կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ, ուստի, թե՛ շինարարության և թե՛ շահագործման փուլում որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

9.1.8. Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված.

- բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),
- հրդեհների առաջացման,
- հեղուկ նյութերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման ենթակա տարածքում ֆիզիկատերերաբանական վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների բնույթը և նախատեսված մեղմացնող միջոցառումները, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր: Արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

9.1.9. Աղմուկ և թրթռում

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը հիմնականում ցածր է, սակայն քանի որ տեղանքը հարում է Մ1 մայրուղուն, այդ հատվածում աղմուկի մակարդակը գնահատվում է որպես միջին-բարձր (հիմնականում՝ ավտոտրանսպորտային միջոցներ):

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպատություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն



հրամանների պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն):

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A):

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների բնույթը, աշխատակիցների և բնակիչների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է ժամանակավոր բնույթ:

Նախատեսվող գործունեության տարածքին մոտ կան մի քանի բնակելի շենք-շինություններ (Պոռշյան բնակավայր), որոնց վրա բացասական ազդեցությունները կանխելու նպատակով պետք է իրականացվեն աղմուկի և թրթռման ելակետային և ընթացիկ գործիքային չափումներ և անհրաժեշտության դեպքում կիրառել համապատասխան մեղամցոնող միջոցառումներ: Մանրամասները ներկայացված են ԲԿՊ-ում:

9.1.10. Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխման կամ մեղմացման միջոցառումներն ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

Սոցիալական միջոցառումներ

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝



- թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս,
- վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում:

9.1.11. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները ներառում են.

- Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նշանակել պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:
- Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար՝ ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ:
- Ապահովել շինհրապարակում աշխատողների համար հանգստի պայմաններ և կենցաղային պայմաններ /լվացարան, զուգարան/:
- Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:
- Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժօգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:
- Անձնակազմը պետք է ապահովվի համապատասխան արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով:
- Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել գրանցամատյանում:
- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)
- Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը շխատանքներն իրականացնել այնպես, որ նվազագույնի հասցվի ազդեցությունը հարևան հանգստացողների և շրջակա տարածքների վրա:
- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:



Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

9.1.12. Հակահրդեհային միջոցառումներ

Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է՝

- մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում կարևորվում է ղեկավարվել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

9.1.13. Բարեկարգում և կանաչապատում

Գործունեության իրականացման ընթացքում կհատվի որոշակի ծառափային բուսականություն, որոնց սակայն մեծ մասը գտնվում է արդեն իսկ վատ վիճակում (չորացած և կոտրատված ծառեր և թփեր), քանի որ տարածքը երկար ժամանակ չի շահագործվել մարդկանց կողմից: Նախատեսվում է հատել մոտ 38 ծառ (14 հատ բարդի, 20 հատ եղևնի, և 4 հատ ուռենի) և 45 թուփ ու կիսաթուփ (անապատային բուսականություն):

Սակայն գործունեության իրականացման շրջանակներում նախատեսվում է իրականացնել բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ, որի արդյունքում ներկայացվող տարածքի զգալի մասը պատված կլինի թարմ ծառափային բուսականությամբ: Մանրամասները ներկայացված են աշխատանքային նախագծում:



9.2. Բնապահպանական ազդեցությունները և դրանք մեղմող միջոցառումները մաքսային և լոգիստիկ կենտրոնի շահագործման փուլում

9.2.1. Օդային ավազան.

Հաշվի առնելով Ծրագրի տեխնիկական բնութագրերը, շահագործման փուլում օդային ավազանի վրա հնարավոր էական ազդեցություն չի կանխատեսվում:

9.2.2. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է՝

- աշխատողների համար խմելու ջուրը հասանելի կլինի մաքսային և լոգիստիկ կենտրոնի տարածքում (վարչական շենք),
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները ապահովված կլինեն մաքսային և լոգիստիկ կենտրոնի տարածքում (վարչական շենք),
- կկառուցվի ոռոգման համակարգ՝ նախատեսվող կանաչապատ տարածքների ոռոգման համար:

9.2.3. Թափոնների կառավարում

«Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)», դասիչ՝ 9120040001004:

Թափոնների քանակները կարելի է որոշել մաքսային և լոգիստիկ կենտրոնի շահագործման ընթացքում՝ փաստացի տվյալների հիման վրա: Տվյալների վերլուծության հիման վրա կկազմվի թափոնի անձնագիր և կներկայացվի ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն համաձայնեցման:

9.2.4. Հողային ռեսուրսներ

Մաքսային և լոգիստիկ կենտրոնի շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

9.2.5. Կենսաբազմազանություն

Բուսական աշխարհ

Մաքսային և լոգիստիկ կենտրոնի շահագործման ժամանակ նոր տարածքներ չեն ներառվելու և բուսական աշխարհի վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում:

Կենդանական աշխարհ

Մաքսային և լոգիստիկ կենտրոնի շահագործման ժամանակ նոր տարածքներ չեն ներառվելու և կենդանական աշխարհի վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում:

9.2.6. Աղմուկ



Գործունեության իրականացման արդյուքնում որոշակիորեն կավելանա տեղանքի աղմուկը, մասնատրապես՝ ցերակային ժամերին, ինչը սակայն չի ունենա էական բացասական ազդեցություն:

9.3. Սոցիալական ծրագիր

Շինարարության և շահագործման փուլերում գործունեության իրականացումն նաև ունենալու է համայնքի բնակիչների համար դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն՝ մասնավորապես, բացվելու են նոր աշխատատեղեր և առաջնահերթություն է տրվելու թե՛ շինարարության և թե՛ սպասարկման ընթացքում ներգրավել մասնագիտական և ոչ մասնագիտական աշխատուժ հարակից համայնքներից/բնակավայրերից:

10. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների:

Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ՋԱԳ + ՕԱԳ, \text{ որտեղ՝}$$

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է:

Մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման և շահագործման ընթացքում հողի որոկական փոփոխություն չի նախատեսվում, ուստի հաշվարկներում չի ընգրկվելու:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է: Մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման և շահագործման ընթացքում կեղտաջրերի արտահոսք չի առաջանում և ջրային ռեսուրսներին վնաս չի հասցվում:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային



գնահատումն է:

Մթնոլորտային օդ

Տնտեսական վնասը շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է, արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասի հաշվարկը կատարված է ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի հունվարի 25-ին «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»-ի:

Արտանետումներ առաջանում են միայն շինարարության ընթացքում

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \tau_q \Phi_g \sum \varphi_i \rho_i \quad (1), \text{ որտեղ}$$

U -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով,

τ_q -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի արտադրական տարածքների համար՝ 4, շարժական աղբյուրների համար՝ 5:

Φ_g -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն, $\Phi_g = 1000$ դրամ:

φ_i -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է:

ρ_i -ն (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, ρ_i գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$$\rho_i = q (3 SU_i - 2 U\theta U_i), SU_i > U\theta U_i \quad (2), \text{ որտեղ՝}$$

$U\theta U_i$ -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

SU_i -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

$q = 1$ ՝ անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:



Հաշվարկի ժամանակ առանձնացնել են շարժական և անշարժ աղբյուրները: Շինարարության արդյունքում առաջացած տնտեսական վնասի հաշվարկը, ինչպես նաև համախառնասխան ցուցանիշներով արտանետվող նյութերի անվանումները ներկայացվում են աղյուսակ 20-ում:

Աղյուսակ 20: Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատման հաշվարկ

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Շգ	Փց	Վի	Տնտեսական վնասը ՀՀ դրամ
	Si	Գ	Քi=Si x գ				U = Շգ Փց Σ ՎiՔi
Փռշի անօրգանական	3.89	1	3.89	4	1000	10	155600
Ածխածնի օքսիդ	2.53	3	7.59	5	1000	1	37950
Ածխաջրածիններ	0.58	3	1.74	5	1000	3,16	27492
Ազոտի երկօքսիդ	2.95	3	8.85	5	1000	12,5	553125
Պ.Մ. /մուր/	0.3	3	0.9	5	1000	41,5	186750
Ծծմբային անհիդրիդ	0.28	3	0.84	5	1000	16,5	69300
Ընդամենը							1030217

Ըստ կատարված հաշվարկների՝ շինարարական աշխատանքների ժամանակ սպասվող արտանետումների հասցված տնտեսական վնասը գնահատվել է 1030217 ՀՀ դրամ:

11. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել է իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:



Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում կիրականացվեն մշտադիտարկումների միջոցառումներ և ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (մեկ անգամ մեկ ամսվա ընթացքում): ԲԿՊ-ն ներկայացված է Հավելված 1-ում:



12.ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախատեսվող գործունեության վերաբերյալ 1-ին փուլի հանրային լսումը կազմակերպվել և իրականացվել է 2024թ-ի նոյեմբերի 1-ին ժամը 11:00-ին՝ ՀՀ կառավարության 19.11.2014թ-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան, ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան բնակավայրի՝ վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային ծանուցման և քննարկումների մասին պատշաճ կերպով ծանուցվել է հանրությունը (հանրային ծանուցման և քննարկումների մասին հայտարարությունը հրապարակվել է օրաթերթում, որը կցվում է) և համայնքին (պաշտոնապես՝ էլ-փոստի գրությամբ):

Հանրային ծանուցման և քննարկումների վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն և համայնքի կողմից տրամադրվել է գործունեության վերաբերյալ նախնական համաձայնության մասին համայնքի ավագանու որոշումը:

Վերը ներկայացվածի հիմնավորող փաստաթղթերը կցված են սույն ՇՄԱԳ-ի փաթեթին: Հանդիպման տեսաձայնագրությունը ներառված է ՇՄԱԳ-ի փաթեթում՝ սույն հաշվետվությանը կից, էլեկտրոնային կրիչով:



ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հնարավոր բացասական ազդեցություն	Մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու կազմակերպություն	Մեղմացնող միջոցառումների ժամանակը	Վերահսկող կազմակերպություն/պատասխանատու	Մեղմացնող միջոցառումների ծախսերը
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ					
<p>Օդային ավազան</p>	<ul style="list-style-type: none"> - պահել մեքենաները և սարքավորումները համապատասխան տեխնիկական վիճակում՝ ավելորդ արտանետումներից խուսափելու համար. - խուսափել շարժիչների անգործությունից. - միշտ ծածկել շինարարական նյութերով և աղբով բեռնված բեռնատարները. - կատարվել գրունտի խոնավեցում, ճանապարհի ջրցան՝ ըստ անհրաժեշտության. - ջրցանը կատարել ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին - կազմակերպել և իրականացվնել փոշու ելակետային և ընթացիկ գործիքային չափումներ՝ շինարարության ընթացքում փոշու մակարդակի արձանագրման նպատակով 	<p>Կապալառու</p>	<p>Շին.աշխատանքների ժամանակ ըստ անհրաժեշտության և կիրառելիության</p>	<p>ՀՀ ՊԵԿ</p>	<p>ընթացիկ ծախսեր</p>



<p>Ջրային ռեսուրսներ</p>	<ul style="list-style-type: none"> - գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար մատակարարել խմելու որակի ջուր՝ բերովի (շերով), - հրդեհաշիջման նպատակով տեղադրել ջրի բաքեր - շինհրապարակում տեղադրել 3 տոննա տարողության պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով, - ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործել է տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, - ճանապարհների ջրցանն իրականացնել տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության - շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած արտադրական հոսքաջրերը ուղղորդել տարածքում տեղադրված բիոզուգարան - շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համապատասխան մասնագիտացված կետերում - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի: - վերը ներկայացված գործողությունները իրականացնել մինչ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի կառուցման ավարտը: Ավարտից հետո օգտվել այդ համակարգից 		<p>Շին.աշխատանքներ ի ժամանակ՝ ըստ պահանջարկի</p>	<p>ՀՀ ՊԵԿ</p>	<p>ընթացիկ ծախսեր</p>
---------------------------------	---	--	--	---------------	-----------------------



	<p>Կեղտաջրեր</p> <ul style="list-style-type: none"> - շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջրի հեռացման համար տեղադրել բիոզուգարան, մինչև ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի կառուցման ավարտը: 				
<p>Հողային ռեսուրսներ</p>	<ul style="list-style-type: none"> - գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր նախատեսել միայն խիստ անհրաժեշտության դեպքում, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացնել վտանգավոր նյութերի պահեստավորումը՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, - շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների վրա, - ավելցուկային գրունտ չի առաջանա, - հանված հողային զանգվածը օգտագործել հետլիցքի և տարածքի բարեկարգման համար 	<p>Կապալառու</p>	<p>Աշխատանքները սկսելուն պես հողային աշխատանքների ընթացքում</p>	<p>ՀՀ ՊԵԿ</p>	<p>ընթացիկ ծախսեր</p>
<p>Ազդեցություն կենսաբազմազանության վրա</p>	<ul style="list-style-type: none"> - գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները - պահպանության միջոցառումներն իրականացնել 31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն որոշման պահանջներին համապատասխան - շինարարական աշխատանքներն իրականացնել ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի 	<p>Կապալառու</p>	<p>Աշխատանքները սկսելուն պես և հողային աշխատանքների ընթացքում</p>	<p>ՀՀ ՊԵԿ</p>	<p>ընթացիկ ծախսեր</p>



	<p>վրա ազդեցությունից խուսափելու համար:</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների ընթացքում ներգրավել կենսաբազմազանության մասնագետ՝ անձնակազմի վերապատրաստման և աշխատանքների ընթացքում դաշտային ուսումնասիրությունների (ըստ անհրաժեշտության) նպատակով 				
<p>Թափոնների առաջացում և կառավարում</p>	<ul style="list-style-type: none"> - շինհրապարակում առաջացող թափոնները ժամանակավոր կուտակել բնապահպանական տեսանկյունից առավել ընդունելի վայրերում և հեռացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով - կենցաղային թափոնների և շինարարական աղբի տեղադրում աղբավայրերում՝ համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված - արգելել ցանկացած տեսակի թափոնների բացօդյա այրումը - շինանյութերը ձեռք բերել լիցենզավորված մատակարարներից 	<p>Կապալառու</p>	<p>Շին.աշխատանքների ընթացքում, հեռացնել կուտակումից հետո 3-5 օրվա ընթացքում</p>	<p>ՀՀ ՊԵԿ</p>	<p>ընթացիկ ծախսեր</p>
<p>Աղմուկ և թրթռում</p>	<p>Շինարարության և սարքավորումների աշխատանքի հետևանքով առաջացող աղմուկի ազդեցությունը մեղմելու նպատակով հարկավոր է.</p> <ul style="list-style-type: none"> - աղմկոտ աշխատանքներն իրականացնել ցերեկվա ժամերին, - մեքենաների շարժիչները պարբերաբար ստուգել և անհրաժեշտության դեպքում կարգաբերել - կազմակերպել և իրականացվնել աղմուկի և թրթռման ելակետային և ընթացիկ գործիքային չափումներ՝ շինարարության ընթացքում աղմուկի և թրթռման մակարդակի արձանագրման նպատակով 	<p>Կապալառու</p>	<p>Շին. աշխատանքների մեկնարկին զուգընթաց և աշխատանքների ընթացքում</p>	<p>ՀՀ ՊԵԿ</p>	<p>ընթացիկ ծախսեր Էլնդիանուր նախահաշվում</p>



<p>Պատմամշակութային գտածոների հայտնաբերում</p>	<p>- գտածոներ հայտնաբերելու դեպքում դադարեցնել աշխատանքները և այդ մասին հայտնել համապարտասխան մարմիններին</p>	<p>Կապալառու</p>	<p>-</p>	<p>ՀՀ ՊԵԿ</p>	<p>-</p>
<p>Առողջական խնդիրներ, պատահարներ շինարարական հրապարակում</p>	<ul style="list-style-type: none"> - աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու կամ դրանցից խուսափելու համար, կկիրառվեն հետևյալ մեղմացնող միջոցառումները. - ապահովել, որ բանվորները և տեղանքի ցանկացած այցելու ապահովված լինի և օգտագործի անձնական պաշտպանիչ արտահագուստ, - ապահովել, որ բանվորները անվտանգության վերապատրաստում անցնեն - ապահովել, որ շինարարական սարքավորումները ստուգված և լիցենզավորված լինեն, - ապահովել, որ շինարարական տեխնիկան օգտագործվի խստորեն հետևելով շահագործման հրահանգներին, - ունենալ առաջին օգնության բժշկական փաթեթներ և հակահրդեհային սարքավորումներ, - աշխատանքային ժամերից դուրս արգելել գործունեությունը տեղանքում, - Վերապատրաստել էլեկտրական աշխատանքներ իրականացնող անձնազմը 	<p>Կապալառու</p>	<p>-</p>	<p>ՀՀ ՊԵԿ</p>	<p>-</p>



<p>Արտակարգ իրավիճակներ</p>	<p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են, - շինարարակիան նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար: 	<p>Կապալառու</p>	<p>Գործունեության ընթացքում</p>	<p>ՀՀ ՊԵԿ</p>	<p>-</p>
<p>Սոցիալական</p>	<p>Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ մոտ 140 մարդու համար:</p>	<p>Կապալառու</p>	<p>Գործունեության ընթացքում</p>	<p>ՀՀ ՊԵԿ</p>	
<p>Բարեկարգում և կանաչապատում</p>	<p>Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերել հնարավորինս պատշաճ տեսքի:</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից, - կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ: - տարածքի կանաչապատումը իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան և ապահովել ռոռզման համակարգ 	<p>Կապալառու</p>	<p>Գործունեության ընթացքում</p>	<p>ՀՀ ՊԵԿ</p>	
<p>ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ</p>					



Օդային ավազան	Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չեն նախատեսվում:	-	-	-	-
Ջրային ռեսուրսներ	Շահագործման փուլում հասանելի կլինի աշխատող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ Այս փուլում ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում	ՀՀ ՊԵԿ կամ այլ շահագործող կազմակերպություն	Գործունեության ընթացքում	-	-
Թափոնների կառավարում	-կենցաղային աղբը հավաքվել պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ,	ՀՀ ՊԵԿ կամ այլ շահագործող կազմակերպություն	Գործունեության ընթացքում	-	-
Արտակարգ Իրավիճակներ	-կետնորնը ապահովվելու է հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով և առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով, - պարբերաբար ստուգել աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը, - տեխնածին վթարների, աղետների առաջացման դեպքում կիրառել միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը, վտանգավոր տարածքից մարդկանց տարահանմանը: - տարերային աղետների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման, էլեկտրահաղորդակցության սարքերը, ապահովել վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը:	ՀՀ ՊԵԿ կամ այլ շահագործող կազմակերպություն	Գործունեության ընթացքում	-	-
Աղմուկ և թրթռում	Շահագործման փուլում որոշակիորեն կավելանա աղմուկի մակարդակը, մասնաորապես ցերեկային ժամերին, ինչը սակայն բացասաբար չի անդրադառնա հարակից բնակավայրի բնականոն կյանքի վրա:	ՀՀ ՊԵԿ կամ այլ շահագործող կազմակերպություն	Գործունեության ընթացքում	-	-



<p>Սոցիալական</p>	<p>-բացառել գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը, -աշխատանքները կազմակերպել ցերեկային ժամերին, նվազագույնի են հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - կարգավորել մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով: Շահագործման փուլում ընդգրկվելու են համապատասխան աշխատողներ՝ մոնիթորինգ իրականացնելու նպատակով՝ հերթափոխային գրաֆիկով</p>	<p>ՀՀ ՊԵԿ կամ այլ շահագործող կազմակերպություն</p>	<p>Գործունեության ընթացքում</p>	<p>-</p>	<p>Ընթացիկ ծախսեր</p>
<p>Բարեկարգում և կանաչապատում</p>	<p>-բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները, -հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջները, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները, -գործունեության տարածքը մաքրել թափոններից, վերականգնել լանդշաֆտը,</p>	<p>ՀՀ ՊԵԿ կամ այլ շահագործող կազմակերպություն</p>	<p>Գործունեության ընթացքում</p>	<p>-</p>	<p>-</p>



Մշտադիտարկման միջոցառումներ

<i>Որ պարամետրը պետք է մոնիթորինգի ենթարկվի</i>	<i>Ինչու պետք է այդ պարամետրը մոնիթորինգի ենթարկվի</i>	<i>Որտեղ պետք է պարամետրը մոնիթորինգի ենթարկվի</i>	<i>Երբ կամ ինչ հաճախականությամբ պարամետրը պետք է մոնիթորինգի ենթարկվի</i>	<i>Ինչպես պետք է պարամետրը մոնիթորինգի ենթարկվի</i>	<i>Մոնիթո-րինգի արժեքը</i>	<i>Ով է պատասխանատու մոնիթորինգի համար</i>
Պատմական և մշակութային արժեքներ	Պատմական և մշակութային հուշարձաններին վնաս հասցնելուց խուսափելու համար	Մաքսային և լոգիստիկ կենտրոն	Նախքան շինարարական աշխատանքները	Գրառումների ուսումնասիրում	Ներառված է նախագծման գնի մեջ	ԿԿ, ԻԳ, Խորհրդատու,
Շինարարական նյութերի որակը	Հավաստիանալ շինարարական նյութերի հուսալիության և մարդկանց առողջության համար դրանց անվտանգ լինելու մեջ	Մատակարարի գրասենյակում կամ պահեստում	Մատակարարման պայմանագրի ուսումնասիրման ընթացքում	Փաստաթղթերի ստուգում	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ



<p>Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում</p>	<p>- Սահմանափակել արտանետումներից հողի և օդի աղտոտումը, - Սահմանափակել վիբրացիայի և աղմուկի հետևանքով հանրությանը հասցվող անհանգստությունը, - Նվազենել երթևեկության խափանումը Կանխել հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտումը Խուսափել շինհրապարակում աղբի և շինարարական նյութերի մնացորդների հետևանքով հնարավոր պատահարներից Շինհրապարակում և դրա շրջակայքում էսթետիկական տեսքի պահպանման համար</p>	<p>-Շինհրապարակ - Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման ճանապարհները</p>	<p>Չնախատեսված ստուգումներ աշխատանքային ժամերին եւ դրանից դուրս</p>	<p>Շարժման ուղղությամբ շինարարական օբյեկտի հարևան ճանապարհների գնում</p>	<p>Ներառված է շինարարության գնի մեջ</p>	<p>ՇԿ</p>
<p>Շինտեխնիկայի տեղաշարժ</p>	<p>- Խուսափել սարքավորումների շահագործման ընթացքում յուղերով հողի և ջրի աղտոտումից</p>	<p>Շինարարական ճամբար և ժամանակավոր հրապարակներ</p>	<p>Սարքավորումների շահագործման ընթացքում</p>	<p>Գործունեության ստուգում</p>	<p>Ներառված է շինարարության գնի մեջ</p>	<p>ՇԿ</p>



Հողի էրոզիա	Էրոզիայի երևույթները կանխելու նպատակով	Ջրային հոսքորի ավիամերձ տարածքներ և նյութերի պահեստավորման տեղամաս	Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում	Էրոզիայի կանխման միջոցառումների և դրանց արդյունավետության ուսումնասիրություն	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ
Հողի աղտոտում	Հողի աղտոտումը նվազեցնելու նպատակով	Բոլոր շինհրապարակներում, ներառյալ շինճամբարը, մոտեցման ճանապարհները,	Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում	Վիզուալ ուսումնասիրություն	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ
	Հողի աղտոտումը նվազեցնելու նպատակով	Ավտոկայանատեղեր, մոտեցման ճանապարհներ,	Ամսեկան, շահագործման ընթացքում	Վիզուալ ուսումնասիրություն	Ներառված է շահագործման գնի մեջ	ՇԿ
Օդի որակ փոշի	Օդի աղտոտումը նվազեցնելու նպատակով	Բոլոր շինհրապարակներում, ներառյալ մոտեցման ճանապարհները,	Ամեն օր, շինարարական աշխատանքների ընթացքում	Վիզուալ ուսումնասիրություն	Ներառված է շահագործման գնի մեջ	ՇԿ
Աղմուկ	Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով	Բոլոր շինհրապարակներում, ներառյալ շինճամբարը, մոտեցման ճանապարհները,	Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում	Աղմկաչափ	80 ԱՄՆ դոլար	ՇԿ
	Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով	Ավտոկայանատեղեր, մոտեցման ճանապարհներ,	Շաբաթական	Աղմկաչափ	80 ԱՄՆ դոլար	ՄԿ



Երթևեկության անվտանգություն	Երթևեկության անվտանգությունն ապահովելու համար	ՇԿ կողմից օգտագործվող բոլոր ընդհանուր ճանապարհները	Ամեն օր, շինարարական աշխատանքների ընթացքում	Վիզուալ ուսումնասիրություն	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ
Կենցաղային աղբի առաջացում	Կանխել հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտումը	Մաքսային և լոգիստիկ կենտրոն	Պարբերաբար, շահագործման ընթացքում	Վիզուալ ուսումնասիրություն	Ներառված է շահագործման գնի մեջ	ՄԿ
Շինհրապարակի ռեկուլտիվացիա եւ կանաչապատում	Շինարարության հետևանքով հողածածկի որակի և լանդշաֆտի էսթետիկ տեսքի կորստի նվազեցման նպատակով	Բոլոր շինհրապարակներում, ներառյալ շինճամբարը, մոտեցման ճանապարհները,	Շինարարության ավարտական ժամանակահատվածում	Վիզուալ ստուգում	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ, ԻԳ, Խորհրդատու,
Աշխատողների առողջություն և անվտանգություն	Վնասվածքների եւ վթարների հավանականությունը նվազեցնելու նպատակով	Բոլոր շինհրապարակներում	Շինարարական աշխատանքների ամբողջ ընթացքում	Գործունեության գնում, արձանագրությունների և հաշվետվությունների ստուգում	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ, ԻԳ, Խորհրդատու
		Մաքսային և լոգիստիկ կենտրոն	Շահագործման ամբողջ ընթացքում	Տեխնոլոգիական մատյանների ստուգում	Ներառված է շահագործման գնի մեջ	ՄԿ, ԻԳ, Խորհրդատու



<p>Պատրաստվածությունը արտակարգ իրավիճակներին</p>	<p>- Նվազեցնել շինարարության ընթացքում աշխատողների անվտանգության ռիսկերը</p>	<p>Բոլոր շինհրապարակներում Մաքսային և լոգիստիկ կենտրոն</p>	<p>Շինարարության ամբողջ ընթացքում</p>	<p>Պարբերական ստուգումներ</p>	<p>Ներառված է շինարարության գնի մեջ</p>	<p>ՇԿ, ԻԳ</p>
---	--	---	---------------------------------------	-------------------------------	---	---------------



<p>Հասարակության իրազեկվածություն</p>	<p>Նվազեցնել շինհրապարակին մոտ գտնվող բնակավայրերի վրա ազդեցության</p>	<p>Տեղական համայնքների գրասենյակներ</p>	<p>Նախքան շինարարական աշխատանքները</p>	<p>Ծանուցման փաստաթղթերի ստուգում Հարցազրույցներ շինհրապարակի մոտ գտնվող բնակավայրերի բնակիչների հետ</p>	<p>Ներառված է շահագործման գնի մեջ</p>	<p>ՆԿ, Խորհրդատու</p>
<p>Հանրային առողջություն եւ անվտանգություն</p>	<p>Ապահովել բնակիչների համապատասխան նախազգուշացումը</p>	<p>Հիմնական ճանապարհների տեսանելի մասերում, բնակավայրերին մոտ գտնվող տեղամասերի մոտ</p>	<p>Ամսեկան</p>	<p>Նախազգուշական նշանների ստուգում</p>	<p>Ներառված է շինարարության գնի մեջ</p>	<p>ՇԿ, ԻԳ, Խորհրդատու</p>
<p>Տեղական բնակչության զբաղվածություն</p>	<p>- Մշակել և իրականացնել աշխատողների ընդունման և աշխատավարձերի վճարման անխտրական քաղաքականություն - Շինարարական աշխատանքների համար աշխատողներ ընդունելիս առաջնահերթությունը պետք է տրվի տեղի բնակչությանը</p>	<p>- Տեղական համայնքներ</p>	<p>Պարբերաբար, շինարարության ընթացքում</p>	<p>Հարցազրույցներ</p>	<p>Ներառված է շինարարության գնի մեջ</p>	<p>ՇԿ, Խորհրդատու</p>



<p>Գենդերային ասպեկտներ</p>	<p>Ապահովել աշխատանքային վայրում/ աշխատողների ճամբարում սեռական ոտնձգությունների բացարձակ անհանդուժողականություն Ուժեղացնել տարածքային իշխանությունների ներգրավվածությունը գենդերային խնդիրների հարցում (օր.՝ ստանալ բողոքներ կանանց կոմից)</p>	<p>- Բոլոր շինհրպարակները - Տեղական համայնքներ</p>	<p>Ամեն ամիս, շինարարության փուլի ընթացքում Եռամսյակային, շահագործման փուլի ընթացքում</p>	<p>Հարցազրույցներ կանանց հետ - Բողոքների ստուգում</p>	<p>Ներառված է շինարարության և շահագործման գնի մեջ</p>	<p>ՇԿ, ՍԿ, Խորհրդատու, ԻԳ</p>
<p>Բողոքների լուծման մեխանիզմ</p>	<p>Ապահովել բողոքների լուծման մեխանիզմի իրականացումը և դրա արդյունավետությունը</p>	<p>- Տեղական համայնքներ</p>	<p>Ամսական</p>	<p>- Բողոքների ստուգում - Հարցազրույց աշխատողների հետ - Հարցազրույցներ համայնքների ղեկավարների և բնակիչների հետ</p>	<p>Ներառված է շինարարության և շահագործման գնի մեջ</p>	<p>ՇԿ, ՍԿ, Խորհրդատու, ԻԳ</p>



ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 27 հուլիսի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Նաիրի գյուղ Պողոտյան Գ. Չաուշի խճուղի 5

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ կառավարության որոշում 05/05/2022թ N 621-Ա, Ընդունման-հանձնման ակտ 06/07/2022թ.

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-053-0156-0013

Մակերեսի չափը (հա)՝ 19.3619

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Խառը կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 27072022-07-0124, գաղտնաբառ՝ Z8XADVH96LQQ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով



5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	07-053-0156-0013-001	Վարչական շենք	4953 քմ	Սեփականության իրավունք
2	07-053-0156-0013-002	Դահլիճ	957 քմ	Սեփականության իրավունք
3	07-053-0156-0013-003	Հեռուստակայան	645.8 քմ	Սեփականության իրավունք
4	07-053-0156-0013-004	Վարչական շենք	1803 քմ	Սեփականության իրավունք
5	07-053-0156-0013-005	Պահակատուն	79.7 քմ	Սեփականության իրավունք
6	07-053-0156-0013-006	Անգար	445.5 քմ	Սեփականության իրավունք
7	07-053-0156-0013-007	Խարխուլ	728 քմ	Սեփականության իրավունք
8	07-053-0156-0013-008	Պահեստ	861.3 քմ	Սեփականության իրավունք
9	07-053-0156-0013-009	Հրածգարան	1215.2 քմ	Սեփականության իրավունք
10	07-053-0156-0013-010	Խարխուլ	623.5 քմ	Սեփականության իրավունք
11	07-053-0156-0013-011	Խարխուլ	540 քմ	Սեփականության իրավունք
12	07-053-0156-0013-012	Խարխուլ	540 քմ	Սեփականության իրավունք
13	07-053-0156-0013-013	Խարխուլ	540 քմ	Սեփականության իրավունք
14	07-053-0156-0013-014	Զորամաս	596.8 քմ	Սեփականության իրավունք
15	07-053-0156-0013-015	Պահեստ	66.1 քմ	Սեփականության իրավունք
16	07-053-0156-0013-016	Պահեստ	114.4 քմ	Սեփականության իրավունք
17	07-053-0156-0013-017	Կաթսայատուն	382 քմ	Սեփականության իրավունք
18	07-053-0156-0013-018	Ավտոհավաքակայան	178.6 քմ	Սեփականության իրավունք
19	07-053-0156-0013-019	Ավտոհավաքակայան	191.7 քմ	Սեփականության իրավունք
20	07-053-0156-0013-020	Ավտոհավաքակայան	204.4 քմ	Սեփականության իրավունք
21	07-053-0156-0013-022	Ավտոհավաքակայան	272 քմ	Սեփականության իրավունք
22	07-053-0156-0013-023	Պահեստ	423.3 քմ	Սեփականության իրավունք
23	07-053-0156-0013-024	Լողավազան	291.5 քմ	Սեփականության իրավունք
24	07-053-0156-0013-025	Պահակատուն	13.6 քմ	Սեփականության իրավունք
25	07-053-0156-0013-026	Ճաշարան	631.6 քմ	Սեփականության իրավունք
26	07-053-0156-0013-027	Վարչական շենք	2585.7 քմ	Սեփականության իրավունք
27	07-053-0156-0013-028	Պահեստ	443.3 քմ	Սեփականության իրավունք
28	07-053-0156-0013-029	Արտադրամաս	1322.6 քմ	Սեփականության իրավունք
29	07-053-0156-0013-030	Մարզադահլիճ	1797 քմ	Սեփականության իրավունք
30	07-053-0156-0013-031	Զրավազան	106.8 քմ	Սեփականության իրավունք
31	07-053-0156-0013-021	Ծածկ	63.5 քմ	Սեփականության իրավունք

ՎԿԱՅԱԿԱՆ N 27072022-07-0124, գաղտնաբառ՝ Z8XADVH96LQQ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքի միջոցով



Կադաստրի կոմիտեի



Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գույքը ամրակցված է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՄԿՐՏԻՉ ՄԱՐԵԳԱՍՊԱՐՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր



ՎԿԱՅԱԿԱՆ N 27072022-07-0124, գաղտնաբառ՝ Z8XADVH96LQQ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կաբող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքի միջոցով



Կադաստրի
կոմիտե

Էջ 3/3



ՀԱՎԵԼՎԱԾ 3՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 5 ՄԱՅԻՄԻ 2022, 621-Ա «ԳՈՒՅՔԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ և ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 496-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՈՒՄ

5 Մայիսի 2022, 621 - Ա

ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 496-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ մասերը և դեկլարավելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պողոտյան համայնքի Գեորգ Չառչի խճուղի թիվ 5 հասցեում գտնվող 19.1 հա ընդհանուր մակերեսով հողամասը և 23.616.9 քառ. մետր մակերեսով շենքերը և շինությունները (այսուհետ՝ գույք)՝ 07-053-0156-0013 կադաստրային ծածկագրով, 1 384 765 000 դրամ հաշվեկշռային արժեքով, հետ վերցնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից և ամրացնել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին՝ իրականացնել որոշման 1-ին կետում նշված գույքի տեխնիկական վիճակի հետազննություն:
3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ համատեղ, սույն որոշումն առաջին անգամ հետազննել հողամասի և շինությունների վիճակը (հիմք ընդունելով որոշման 2-րդ կետում նշված հետազննության արդյունքները)՝ սահմանելով, որ անշարժ գույքի իրավունքների նկատմամբ պետական գրանցման աշխատանքները ենթակա են իրականացման Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի վիճակագրի հաշվին:
4. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը հետ վերցնել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից և ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին՝ համաձայն հավելվածի:
5. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի հետ համատեղ, սույն որոշման առաջին կետում նշված գույքի վրա նախատեսված շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո, բայց ոչ ուշ, քան 2027 թվականի մայիսի 1-ը, ապահովել սույն որոշման հավելվածում նշված անշարժ գույքի հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը:
6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի «Անշարժ գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N 496-Ա որոշման հավելվածով հաստատված ցանկի 49-րդ կետը:

[հավելված](#)

Նիկոլ Ֆաշինյան



ՀԱՎԵԼՎԱԾ 4՝ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, (0224) 2-11-10, nayiri.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 3955-Ա

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ **որոշում եմ**.

1. Բավարարել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի լիազորված անձ Նորիկ Մնոյանի դիմումը Նաիրի համայնք, գյուղ Պողոտյան, Գևորգ Չաուշի խճուղի, 5 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը պատկանող 07-053-0156-0013 կադաստրային ծածկագրի հողամասում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27072022-07-0124) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Երևանի արտաքին տնտեսական գործունեության կենտրոնի, վարչական շենքի և օժանդակ շինությունների կառուցման վերաբերյալ և տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ կառուցման աշխատանքների աշխատանքային նախագծային փաստաթղթեր պատվիրելու համար:

2. Հանձնարարել աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ Բաբկեն Բեգլարյանին քաղաքացուն ապահովել անհրաժեշտ փաստաթղթերով և հետևել դրանց ճիշտ իրականացմանը:

3. Պարտավորեցնել Նորիկ Մնոյանին կառուցապատման աշխատանքները սկսել միայն անհրաժեշտ փաստաթղթերի առկայության դեպքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



[Handwritten signature]

ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

2022 թ. նոյեմբերի 8
ք.Եղվարդ



Ձև N 1-2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՑԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆԱԿԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱՐԴԱՔ)

Կոտայքի մարզ, Նաիրի համայնք
(մարզ, համայնք)

N CPP0-0000-3692 09.11.2022թ.

Օրյնկտ

Երևանի արտաքին տնտեսական գործուեության կենտրոնի, վարչական շենքի և օժանդակ շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման համար:

4-րդ կառուցարխ

(օրյնկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերակառուցում, գործարձակման նշանակության փոփոխություն (նախկին բնորոշումը, եզրույթները, ռիսկափոփոխության տեսիմանը հղաներդրման, նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Կոտայքի մարզ, Նաիրի համայնք Պռոշյան գյուղ, Գևորգ Չաուշի խճուղի թիվ 5, 07-053-0156-0013
(մարզի, համայնքի, վտորցի անվանումները, շենքի համարը, հաղամասի ծանկազիցը)

Կառուցապատող Հայրատունի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե, ք Երևան, Մ Խոյրենացու 3,7, 60844376, norik_mnoyan@taxservice.am
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, քննկության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը Կառուցապատողի հայտ և աեչարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական 27072022-07-0124
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաղամասի աքումադման, աեչարժ գույքի փոփոխման իրավունքը նախատող անկրօծիչ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը Երեք տարի
(N1 Հաշվեվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՐ ՀՈՂԱՄԱՄԲ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) եշված դրույթներին գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ենթկայացվող ամկնոյի սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է

Բնակավայրերի խտոր կառուցապատման գոտում
(նօգրմասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նորոտակային և գործարձակման նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը

19,3619 հա
(նօգրմասի սահմանները՝ կտորիկառույցին նշանայնամբ, մտկերնող (ուս))



3. Հողամասի առկա վիճակը

Մեղմ ռեյիեֆային տարածք

(ռեյիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ բանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները

Մայասարկման ճանապարհ

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մտնեցումները և այլն)

5. (*) Բնօժենդանական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) Նախագծվող և կից տարածքով անցնող ինժեներական հաղորդագծեր

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

Բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները համ ձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տրածքներ (պահպանական գոտիներ)

Չկան

(հուշարձանի անվանումը, կոորդատիվները և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

Հարևան հողատարածքների սահմանագծով տեղադրված ճակատներում բացվածքներ չնախատեսվող

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՑԻՆ ՊԱՀԱՆՔՆԵՐ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Մշակել Երևանի արտաքին տնտեսական գործուևեության կենտրոնի, վարչական շենքի և օժանդակ շինությունների նախագիծ 27072022-07-0124 վկայականով ամրագրված հողամասերի սահմաններում: Նախագիծն իրականացնել նախագծային և տեխնիկական նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան

(կլենկով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

Ըստ նորմերի

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտրներից (օբյեկտներից) (մետր)

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

40 մ

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը /կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

Կառույցների տակ մինչև 40%, շենքը սպասարկող ճանապարհների և սավվածքների համար մինչև 40%



9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)
Մինչև 20%

9.7. այլ պահանջներ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը
Քանդել N 27072022-07-0124 վկայականում նշված բոլոր շինությունները

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում
Կցվում է «Վեոլիաջուր» ՓԲԸ
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում
Կցվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում
Կցվում է «Գազայրոմ Արմենիա» ՓԲԸ
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակ ության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը
Կցվում է
(համաձայն N1 Հաղիչվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլակետային սվալակները)

12.5. թույլ հոսանքներ
Չկա

12.6. ադրահանություն
Նաիրի համայնքի «Բարեկարգում և բնակֆոնը» ՀՈԱԿ

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում
Հարթ ռելիեֆ, կազմակերպված ջրահեռացում
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում
տարածքը քարեկարգել, կանաչապատել և լուսավորել
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանոնադատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր
Տեղական շինանյութեր և շինվածքներ, ավազ, խիճ, բետոն, քար, ամրն, և այլն
(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ
ըստ նորմատիվ պահանջների
(տրտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ
ըստ նորմատիվ պահանջների
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)



18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ ըստ նորմատիվ պահանջների

19. Շրջակա միջավայրի պահպանում

շրջակա միջավայրը զերծ պահել վտանգավոր ազդեցությունից
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Երևարարության կազմակերպում

Երևարարական աղբի կազմակերպված տեղափոխում

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տեսանկյունից և տրանսպորտի ախտաբանի աշխատանքի սպասանված վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

Երեք տարի աշխատանքային նախագիծ

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

<< կառավարության 2015թ. մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N2-ի համաձայն՝ պետական համալիր փորձաքննություն

<< հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգին համապատասխան

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ եղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

<< քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեխնիկական մարմնի հետ

(Կրակատեղի մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, եղվում է նաև առաջադրանքի փոփոխման ենթադրությունը՝ N1 Հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

Կազմակերպել հանրային լսումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N1 Հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

Ապահովել

27. Այլ պայմաններ

նախագիծը համաձայնեցման ներկայացնել երեք օրինակից

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ



(Handwritten signature)

(ստորագրությունը, անունը, ազգանունը)